

The background of the entire page is a photograph of the interior of an ancient stone building, likely a church or cathedral. It features a large dome with a ribbed structure and several arched windows that allow natural light to enter. The walls are covered in intricate carvings, including what appear to be angel figures and other religious motifs. The overall tone is warm and historical.

Կարեն Մաթևոսյան
ԱՄՈՒԿ

Երևան 2010

Ministry of Culture of the Republic of Armenia

Service for the Protection
of Historical Environment and Cultural
Reservations Museum

Karen Matevosyan

ՄՈՄԻԿ

Yerevan 2010

ՀՀ Մշակույթի նախարարություն

Պատմամշակութային
արգելոց-թանգարանների և
պատմական միջավայրի պահպանության
ծառայություն

Կարեն Մաթևոսյան



ՄՈՄԻԿ

Երևան 2010

ՀՏԴ 008:72 (091)
ԳՄԴ 71 + 85. 113 (2Հ)
Մ 874

Մ 874

Մաթևոսյան Կարեն

Մոմիկ /Մաթևոսյան Կարեն; խմբ.՝ Ա. Այվազյան;
Պատմամշակութային արգելոց-թանգարանների և
պատմական միջավայրի պահպանության
ծառայություն.– Եր., 2010. – 88 էջ:

Գրքում ներկայացվում է միջնադարյան Հայաստանի նշանավոր ճարտարապետ, քանդակագործ և մանրանկարիչ Մոմիկի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը: Հրատարակվում է Մոմիկի ծննդյան 750-ամյակի տոնակատարության առիթով և նախատեսված է Հայաստանի միջնադարյան մշակույթով հետաքրքրվող ընթերցող լայն շրջանակների համար:

This book briefly presents the life and creative activity of the famous Armenian medieval architect, sculptor, miniaturist. This book is being published for Momik's 750th anniversary and is provided for a wide circle of readers.

ՀՏԴ 008:72 (091)
ԳՄԴ 71 + 85. 113 (2Հ)

© Կարեն Մաթևոսյան, 2010

© Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն, 2010

ISBN 978-99941-838-2-1

խմբագիր
Արգամ Այվազյան

գրաֆիկական ձևավորում
և էջադրում
Հարություն Սամուելյան

translator of the English text
M. Hakobyan

editor
T. Malumyan

visual concept, design
and layout
Haroutiun Samuelian





У П У Ђ Ч 7 5 0 М О М І К

Հայարվեստի ամենանշանավոր գործիչներից է միջնադարյան բազմաշնորհ արվեստագետ՝ ճարտարապետ, քանդակագործ, գրիչ և մանրանկարիչ Մոմիկը: Նրա կերտած եկեղեցիները, մեծարվեստ քանդակներն ու խաչքարերը, ընդօրինակած ձեռագրերի մանրանկարները համարվում են հայ միջնադարյան արվեստի բացառիկ ստեղծագործություններ: Իսկ ամբողջության մեջ, Մոմիկի ստեղծագործական ժառանգությունը ներկայացնում է հայ արվեստի ավանդական սկզբունքների և նորարարական միտումների գոյությունը ու զարգացմամբ ստեղծված գեղարվեստական մի նոր որակ: Ինքը՝ Մոմիկը, նման էր Վերածննդի մեծերին ոչ միայն որպես ճարտարապետ և կերպարվեստի տարբեր ասպարեզներում ստեղծագործող բազմաշնորհ վարպետ, այլև գեղագետ, քննող ու պրպտող մտքի և հուզական խառնվածքի տեր ստեղծագործական անհատականություն:

Մոմիկն առաջին անգամ հիշվում է 1283-84 թթ. Գլաձորի համալսարանում գրված մի ձեռագրի հիշատակարանում, այնուհետև բազմիցս հիշատակվում է Օրբելյան գործող իշխանական տան հոգևոր կենտրոն և միաժամանակ Սյունյաց մետրոպոլիտների աթոռանիստ համարվող Նորավանքում գրչագրված ձեռագրերում և վիմագրերում: Մոմիկը, ով վերջին տարիներին հայտնի դարձած տվյալների համաձայն ծնունդով Վայոց ձորից էր, մի քանի տասնամյակ եղել է Օրբելյանների տան ճարտարապետ-նկարիչը, որով էլ մեծապես պայմանավորվել է նրա ընդարձակ գործունեությունը և ժամանակին վայելած հռչակը:

Մեր օրերն են հասել ոչ միայն Մոմիկի մի շարք ստեղծագործությունները, այլև նրա գրած մի քանի հիշատակարան, վիմագիր արձանագրություններ, նաև այլ հեղինակ-

ՄՈՄԻԿ

Բազմաշնորհ արվեստագետը

MOMIK

Gifted Artist

Մոմիկի առաջին
հիշատակարանը

The first memorial
of Momik

As a gifted artist, architect, sculptor, scribe and miniaturist Momik is one of the most renowned personalities in Armenian art. His art, including churches, ingenious sculptures and khachkars (cross-stones), miniatures of copied manuscripts are unique creations of Armenian medieval art. In its integrity Momik's creative heritage presents a completely new artistic value, created by the combination of traditional principles and innovative tendencies of Armenian art. Momik himself is comparable to the Renaissance masterminds not only as an architect and a gifted master in different spheres of fine arts but also as an aesthete, curious and emotional creative individual.

The first mention about Momik can be found in a manuscript record written at Gladzor University in 1283-1284 A.D. Thereafter he is often mentioned in inherited lapidaries and manuscripts scribed in Noravank which was the holy center of powerful Orbelyan noble dynasty and also the residence of Syunik metropolitans. According to recently revealed details, Momik was born in Vayots Dzor. He served as the Orbelyan family architect and artist, which greatly contributed to his extensive activity and celebrity.

We have inherited not only a number of Momik's artworks, but also a few manuscripts and lapidary records, as well as citations of other sources and authors about him.



ների ու աղբյուրների վկայություններ նրա մասին: Այս ամենն ի մի բերելով՝ ստորև ներկայացվում է մեծ արվեստագետի ստեղծագործական հարուստ վաստակն ու կյանքի ուղին:

XIII դարի վերջին և XIV դարի սկզբներին Սյունիքը և նրա արևմտյան խոշոր գավառ Վայոց ձորը գտնվում էին Օրբելյան և Պոռշյան իշխանների տիրապետության տակ, որոնք ընդունելով մոնղոլների գերիշխանությունը ազատորեն տնօրինում էին երկրամասի ներքին կյանքը: Ընդ որում Օրբելյանները ոչ միայն իշխաններ էին, այլև սկսած Ստեփանոս Օրբելյանի աթոռակալությունից (1285-1303), տնօրինում էին երկրամասի հոգևոր իշխանությունը՝ Սյունյաց մետրոպոլիտությունը, որի երկու գլխավոր կենտրոններն էին Տաթևը և Նորավանքը:

Իշխան Տարսայիճ Օրբելյանի որդի Ստեփանոս Օրբելյանը սկզբնական կրթությունը ստացել է Տաթևում, ապա 1280 թ. Նորավանքում ձեռնադրվել կուսակրոն քահանա: 1282 թ. նշանավոր րաբունապետ Ներսես Մշեցին (մահ. 1284 թ.) իր աշակերտներով հաստատվում է Վայոց ձորի Աղբերց վանքում: Այստեղ ձևավորվում է միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր ուսումնական հաստատություններից մեկը՝ Գլաձորի համալսարանը, ուր իր ուսումն է շարունակում Ստեփանոս Օրբելյանը և Ներսես Մշեցուց վարդապետական գավազան ստանում: Դատելով այն փաստից, որ Մոմիկը Գլաձորում Ներսես Մշեցու համար ընդօրինակված ձեռագրում մի խորան է նկարել և դրա մեջ փոքրիկ հիշատակարան գրել՝ կարող ենք ենթադրել, որ նա Սյունիքի ապագա մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի կրտսեր ուսումնակիցն է եղել: Այստեղից էլ սկսվել է նրանց՝ մի

Ստեփանոս Օրբելյան և Մոմիկ

Օրբելյանների
տոհմի զինանշանը
Նորավանքում

The coat of arms
of the Orbelyan dynasty
in Noravank



Stepanos Orbelyan and Momik

Near the end of the 13th and the beginning of the 14th centuries Syunik and its western large region (gavar) of Vayots Dzor was under the rule of Orbelyan and Proshyan potentates, who, under the hegemony of the Mongols, had autonomy in the internal affairs of the region. Moreover, starting from Stepanos Orbelyan's reign (1285-1303), the Orbelyans also possessed the spiritual authority of the region, the eparchy of Syunik with its two main centers Tatev and Noravank.

Stepanos Orbelyan, the son of potentate Tarsayij Orbelyan, studied at Tatev, after which in 1280 was ordained as friar-priest in Noravank. In 1282 the famous metropolitan Nerses Mshetsi (died in 1284) made a lodgment with his students in Vayots Dzor Aghberd Monastery. Thus, one of the most significant educational institutions in medieval Armenia, Gladzor University, was founded. Here Stepanos Orbelyan continued his studies and received an archimandrite staff from Nerses Mshetsi. The fact that Momik drew an altar for Nerses Mshetsi in a copied manu-

կողմից պատվիրատու-մեկենասի, մյուս կողմից՝ հովանավորյալ արվեստագետի համագործակցությունը, որը Ստեփանոս Օրբելյանից փոխանցվել է նրա հաջորդ և տոհմակից մետրոպոլիտներին՝ Հովհաննես Օրբելին և Ստեփանոս Տարսայիճին: Նրանց և Օրբելյան տոհմի իշխանների ու իշխանուհիների պատվերով է Մոմիկը գրել ձեռագրեր, կերտել փառահեղ եկեղեցիներ ու գեղաքանդակ խաչքարեր:

Գլաճորի վերոհիշյալ ձեռագիրն այժմ պահվում է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում (ձեռ. թիվ 571): Մոմիկի հիշատակագրությունը գետեղված է բուսական ոլորագարդերով զվազարդի ներսի ուղղանկյուն հատվածում՝ «զՄոմիկ նկարիչ խորանիս յիշեցեք, աղաչեմ: Հետաքրքրական է, որ հիշատակագրության առաջին՝ «Զ» տառի բոլորակի մեջ Մոմիկը մարդկային դեմքի փոքրիկ գծանկար է արել, իսկ գրության վերջում՝ ստորագրություն հիշեցնող գծագրություն (Վիեննա, ձեռ. թիվ 571, թերթ 24ա):

Մոմիկի գրած վաղ շրջանի մեկ այլ ձեռագրի մասին հիշատակություն է պահպանվել 1287 թ. Թեղենյաց վանքում գրված հիշատակարանում, որտեղ Դավիթ գրիչը նշում է, որ արվեստագետի սկսած շքեղ մատյանը գերեվարվել է²:

1285 թվականին Ստեփանոս Օրբելյանն ընտրվում է Սյունյաց աթոռակալ և ձեռնադրության համար ուղևորվում Կիլիկիա, որտեղ ջերմ ընդունելություն է գտնում Հայոց Լևոն Գ թագավորի (1269-1289) մոտ: Նորընտիր կաթողիկոս Կոստանդին Բ Կատուկեցին (1286-1289) Ստեփանոս Օրբելյանին ձեռնադրում է որպես «...մետրապոլիտ մեծ աթոռոյն Սիւնեաց ի վերայ այլոց եպիսկոպոսացն, որք կային աստ և անդ ոմանք ի Վայոց ձոր և ոմանք ի Տաթև»³:

Շուրջ մեկ տարի Կիլիկիայում մնալուց



Անվանաթերթ
Ստեփանոս Օրբելյանի
համար Մոմիկի գրած
ձեռագրից

Title-leaf for Stepanos
Orbelyan from Momik's
manuscript

script and put a small memorial in it allows us to assume that he was the junior schoolmate of Stepanos Orbelyan, the prospective metropolitan of Syunik. Herein started the collaboration between the Maecenas client and the favorite artist. This relationship was transferred from Stepanos Orbelyan to his successors and clan-related metropolitans Hovhannes Orbelyan and Stepanos Tarsayij. It is by the order of these individuals and other potentates and princesses of the Orbelyan clan that Momik wrote manuscripts, created majestic churches and brilliantly-sculpted khachkars.

The above mentioned manuscript is now kept in the Mkhitarian Matenadaran (total of 571 manuscripts) in Vienna. Momik's memoir is placed in the rectangular space inside the floral-flourished tiara: "I beg you to remember Momik as the artist of altar".¹ It is interesting that in the circle of the memorial's first "Z" letter Momik made a small sketch of a human face and a signature-like figure at the end of the writing (Vienna, manuscript num. 571, sheet 24a).

Another one of Momik's manuscript is noted in a record, made at Teghenyats Monastery in 1287, where scribe Davit mentions that the gorgeous journal started by the artist was stolen.²

In 1285 Stepanos Orbelyan was elected as Syunik vicar and left for Cilicia for ordination, where he received a warm reception from the Armenian king Levon the 3rd (1269-1289). The newly elected Catholicos B Katuketsin (1286-1289) ordained Stepanos Orbelyan as the "... Metropolitan of Syunik Great See over other bishops that reside here and there in Vayots Dzor and Tatev".³

After around a year in Cilicia Stepanos Orbelyan returns to Syunik which at the time also had a bishop, residing in Tatev. The

հետո Ստեփանոս Օրբելյանը վերադառնում է Սյունիք, որն այդ ժամանակ ուներ նաև Տաթևում աթոռակալող եպիսկոպոս: Վերջինս փորձում է խոչընդոտել Տաթևի և Նորավանքի աթոռները միավորելու Ստեփանոս Օրբելյանի ծրագրերը, սակայն մետրոպոլիտն իր հոր՝ Տարսայիճ իշխանի օգնությամբ, ստանալով նաև երկրի ընդհանրական տերերի՝ մոնղոլ խաների համաձայնությունը կարողանում է միավորել Սյունյաց աթոռը: Հետագայում Ստեփանոս Օրբելյանը Սյունյաց պատմության մեջ վկայաբերում է Տաթևի ու Նորավանքի եղբայրական հարաբերությունների մասին իր սահմանած սկզբունքները⁴: Չնայած մետրոպոլիտական աթոռանիստը Նորավանքում էր, Ստեփանոս Օրբելյանը մեծ ուշադրություն է դարձնում նաև Տաթևին, որտեղ 1295 թ. կառուցում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին⁵: Ինչպես ստորև կտեսնենք, այդ եկեղեցու ճարտարապետը, ամենայն հավանականությամբ, Մոմիկն էր:

Ստեփանոս Օրբելյանը ոչ միայն նշանավոր եկեղեցական գործիչ էր, այլև բազմադյուն հեղինակ, աստվածաբան, պատմիչ, բանաստեղծ: Բնականաբար գիր ու գրականության, գրչության ու արվեստի մարդիկ վայելում էին նրա հովանավորությունը: Դրանց թվում հատկապես հայտնի դարձավ Մոմիկը, որի աստվածատուր շնորհն ու օժտվածությունը բարձր էին գնահատում նրա ժամանակակիցները: Ստեփանոս Օրբելյանը հենց Մոմիկին է հանձնարարել իր առձեռն օգտագործման համար նախատեսված փոքր չափեր ունեցող ավետարանի պատկերազարդումը:

bishop tries to interfere with Stepanos Orbelyan's plan to unite Tatev and Noravank See. However, with his father potentate Tarsayij's help and by the agreement of Mongols, who had the general rule over the country, metropolitan Stepanos Orbelyan succeeded in uniting the Syunik See. Later in the history of Syunik Stepanos Orbelyan refers to the principle of brotherhood, established by him, between Tatev and Noravank.⁴ Even though the metropolitan residence was in Noravank, Stepanos Orbelyan attached great importance to Tatev as well where he built St. Grigor the Enlightener Church in 1295.⁵ As we will see further in the text, Momik was most likely the architect of the church.

Besides being a distinguished religious leader, Stepanos Orbelyan was also a gifted author, theologian, historian and poet. Naturally, people devoted to writing, knowledge, scribing and art enjoyed his patronage. Among those Momik was the most prominent whose God-given talent and endowments were highly acclaimed by his contemporaries. Stepanos Orbelyan ordered Momik specifically to illustrate his personal small size Gospel.

Manuscripts

Illustrated

by Momik

Brothers Hovhannes and Tadevos ordered Momik to write and illustrate a new gospel in 1292 after the master made lodgment in Noravank (the Matenadaran, manuscript number 2848), and they call the artist “a significant and genius inimitable scribe and illustrator...”⁶ It is also interesting to observe the admiration Momik expresses when presenting his inhabitation in Noravank and its leader, Metropolitan of Syunik, Stepanos Orbelyan. “I protracted... for the State of Syunik the province of Vayots Dzor, for the glorious, great and celebrated cloister called Noravank, to the high court patriarchate

Նորավանքում հաստատված Մոմիկին 1292 թվականին մի Ավետարանի գրչությունն ու նկարագրողունը պատվիրած Հովհաննես և Թադեոս քահանա եղբայրները (Մատենադարան, ձեռ. թիվ 2848) հիշատակարանում արվեստագետին կոչում են. «բազմիմաստ և հանճարեղ յարուեստ գրչի և նկարագրութեան...»⁶: Հետաքրքիր է նաև, թե Մոմիկն ինչպիսի մեծարական խոսքերով է ներկայացնում իր բնակության վայր Նորավանքը և նրա առաջնորդ, Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանին. «Գծագրեցի... ի նահանգիս Սինեաց, ի գաւառիս Վայոյ ձոր, ի փառաբնակ և ի հոյակապ և ի հռչակաւոր մենաստանիս Նորավանս կոչեցելոյ, յարքունապատիւ գահոյս հայրապետութեան, գերափառ և մեծապատիւ, հրաշագան, ամէնիմաստ հզար իմաստասիրի և բանիբուն րաբունապետի և արհիական քաւչապետի և վերադիտողի Տանս Սինեաց Տեառն Տէր Ստեփաննոսի՝ առաջնորդի սուրբ ուխտիս, ընդ հովանեաւ երկնաճեմ և աստուածակերտ քաւարանացս, կարողութեամբ Աւագ Սուրբ Նշանիս և աստուածընկալ Սուրբ Խաչիս և այլ բազմագումար սրբոցս, որք աննման գոյով իբրև զարեգակն ջահաւոր փայլեն յաշխարհիս Հայոց»⁷:

Ձեռագիրը գրված է մագաղաթի վրա, ունի 320 թերթ (32,5 x 23,7 սմ), գրչությունը՝ բոլորգիր: Մատյանն ունի ավետարանիչների պատկերներ՝ Մարկոս ավետարանիչ և Պետրոս առաքյալ, Ղուկաս ավետարանիչ, Պրոքորոն, նաև չորս անվանաթերթ և բազմաթիվ լուսանցագրեր: Դրանցից մեկը եկեղեցու պատկեր է, որը Մ. Հասրաթյանը համարում է Նորավանքի Բուրթելաշեն Ս. Աստվածածին եռահարկ եկեղեցի դամբարանի հորինվածքային նախատիպ⁸: Իսկ ընդհանրապես, այս ձեռագրում առկա ավետարա-

Մոմիկի

պատկերագրողած

ձեռագրերը

Ղուկաս ավետարանիչ
Ավետարան, 1292

Luke the Evangelist
The Gospel, 1292



throne, effulgent and honored, fantastic and wise as thousand philosophers, the adept master and archbishop and the fiduciary of the Home of Syunik, Father Ter Stepanos, the leader of the sacred pledge, the benefactor of my celestial and divine purgatory, with the resources of Senior Saint Nshan and godly St. Khach and other prosperous saints who with the unmatched warmth of the sun illuminate as enlighteners of the Armenian land.⁷⁷

The manuscript is written on a parchment and has 320 sheets (32.5x23.7 cm) with a curled writing style. The manuscript has images of Mark the Evangelists and the Apostle Paul, Luke the Evangelist, Prokoron, as well as four title-pages and marginal decorations.



Ավետարան, 1292
Մարկոս ավետարանիչ
և Պետրոս առաքյալ

Հովհաննեսի
Ավետարանի
անվանաթերթը

Մոմիկի
հիշատակարանը

The Gospel, 1292
Mark the Evangelist
and the Apostle Peter

The title-page
of the Gospel of John

The memorial
of Momik



ՄԱՐԿՈՍ ԵՎԱԳԼԻՍՏԻՆ
ԱՎԵՏԱՐԱՆԻՉ ԵՎ ՊԵՏՐՈՍ
ԱՌԱՔՅԱԼ
ՀՈՎԻԹԱՆԵՍԻ
ԱՎԵՏԱՐԱՆԻ
ԱՆՎԱՆԱԹԵՐԹԸ
ՄՈՄԻԿԻ
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

նիշների պատկերներն աչքի են ընկնում կոտ հորինվածքով, մանրամասների ծավալային լուծումներով (նշելի են հատկապես աթոռներին դրված խոշոր բարձերը) և ընդհանուր կոթողայնությամբ որոնք վկայում են նկարչի պլաստիկ կերպարային մտածողության մասին: Եթե սրան ավելացնենք անվանաթերթերի զարդապատկերային ճոխությունը, գծանկարի հստակությունը, գունային նուրբ երանգների կիրառությունը, ապա պարզ կդառնա, որ այս ձեռագրում գործ ունենք ոչ միայն մանրանկարչության արվեստին հմտորեն տիրապետող վարպետի, այլև իր աշխատանքի նկատմամբ գեղագետի մոտեցում ցուցաբերող արվեստագետի հետ: Դրա հավաստումն է նաև ձեռագրի 149բ թերթի կարմիր թանաքով և գեղագրական փայլուն արվեստով գրված հիշատակարանը, որը վկայում է Մոմիկի գրչական հմտության, տառաձևերի հետ համարձակորեն ազատ և ստեղծագործաբար վարվելու կարողության մասին:

Պատկերագրական-թեմատիկ առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում միևնույն մանրանկարում Մարկոս ավետարանիչի և Պետրոս առաքյալի պատկերումը: Ավանդության համաձայն Պետրոսն էր, որ դարձի բերեց Մարկոսին, պատմելով Քրիստոսի ու նրա գործունեության մասին, իսկ սույն մանրանկարում նա ներկայացվում է որպես Մարկոսին ավետարանի տեքստը թելադրող և դրա ճշմարտացիությունը վկայող:

Ձեռագրի հիշատակարանում Մոմիկն իր մասին գրում է՝ «...անարիս ի սարկաւագս», որից երևում է, թե այդ ժամանակ սարկավագ էր: Հետագայում նա այլևս իր հոգևոր կոչման մասին չի հիշատակում, որից պետք է եզրակացնել, որ քահանայական ձեռնադրության չի արժանացել: Իսկ

One of the decorations is an image of a church, which M. Hasratyan believes to be the imaginary archetype of Noravank's Burtelashen St. Astvatsatsin three-floor church entombment.⁸ In general, the images of evangelists in this manuscript stand out with solid composition, dimensional solutions of details (in particular the big pillows laid on chairs) and with general magnificence which provide evidence of the artist's flexible figurative intellection. Adding the ornamental luxury of title-pages, the precision of drawings and the application of delicate chromatic tints, it is evident that we encounter with not only a master of miniature art, but also an artist with an aesthetic approach to his work. This perception of Momik is also proven by the marvelous pictorial memorial made in red ink on 149b sheet of the manuscript which confirms Momik's writing excellence, the ability to work with letterforms confidently, freely and creatively.

In a pictographic-thematic sense the portrayal of Mark the Evangelist and the Apostle Paul are of great interest. According to the legend, it was Paul who forwarded Mark to the right path by telling him about Christ and his deeds. In this particular miniature he is presented as dictating Mark the text of the Gospel and witnessing its truth.

In the manuscript memorial Momik writes about himself, "... the deacon" which shows that he was a deacon at that time. He does not mention his religious status thereafter which lets us assume that he was not ordained as a priest. From associated facts we may conclude that Momik was engaged in artistic work with a deacon's status and as the Orbelyan's family artist and architect. He was married and had a son.

In the record of the same manuscript Mo-



հարակից փաստերից դատելով Մոմիկը սարկավագի աստիճանով և Օրբելյանների տան նկարիչ-ճարտարապետի հանգամանքով զբաղվել է ստեղծագործական աշխատանքով, միաժամանակ, ամուսնացած է եղել և ունեցել է որդի:

Նույն մատյանի հիշատակարանում Մոմիկը նշում է նաև իր ուսուցչին՝ «Աղաչեմ ևս յիշել զբազմերախտի ուսուցիչն իմ զՅովասաբ կուսակրոն քահանայ»⁹: Ուշագրավ է, որ նույն թվականին Հովասափը մի ձեռագիր է ընդօրինակել Գլաձորի համալսարանի նոր ուսուցչապետ Եսայի Նչեցու համար¹⁰: Նորավանքում պահպանվել է Հովասափի 1324 թվականը կրող տապանաքարը¹¹:

1302 թվականին Մոմիկը Ստեփանոս Օրբելյանի պատվերով նկարագրողել է անսովոր փոքր չափերի մի Ավետարան (Մատենադարան, ձեռ. թիվ 6792, գրիչ՝ Հովհաննես Օրբել): Ըստ երևույթին այն նախատեսված է եղել հագուստի գրպանում պահելու համար: Ձեռագրի թերթերի ընդհանուր չափերն են 12x8.5 սմ, որոնց

Ավետարան, 1302
Պայծառակերպություն,
Մուտք Երուսաղեմ

The Gospel, 1302
Transfiguration,
Entry to Jerusalem



Ավետարան, 1302
Ողբ,
Հարություն

The Gospel, 1302
Lamentation,
Resurrection

mik also mentioned his teacher: “I beg you to remember the condign teacher of mine, Hovasap, a celibate priest as well”.⁹ It is noteworthy that Hovasap copied a manuscript for Yesayi Nshetsi, the new senior professor of Gladzor University.¹⁰ There is the gravestone of Hovasap on which is carved the date 1324.¹¹

In 1302 Momik illustrated an unusually small Gospel (the Matenadaran, manuscript N6792, scribe Hovhannes Orbel), ordered by Stepanos Orbelyan. It was most likely made for keeping inside the pocket of a shirt. The dimensions of the manuscript sheets are 12x8,5cm. Momik skillfully pictured the main scenes of the Lord's Gospel on smaller parts of the sheets provided for illustrations. The miniatures are placed on the first pages of the manuscript as follows: Annunciation, Birth (1b-2a opening), Presentation (Tiarn'ndaraj), Baptism (3b-4a), Transfiguration, Entering Jerusalem (5b-6a), Foot-washing, Crucifix (7b-8a), Lamentation, Resurrection (9b-10a), Ascension, and Pentecost (11b-12a): There are also images of John the Evangelist, Prokhoron, and the Apostle Paul

մեջ՝ ավելի փոքր նկարադաշտում, Մոմիկը զարմանալի վարպետությամբ պատկերել է Ավետարանի տերունական պատկերաշարի հիմնական տեսարանները: Մանրանկարները զետեղված են ձեռագրի սկզբի թերթերում, հետևյալ հերթականությամբ՝ Ավետում, Ծնունդ (1բ-2ա բացվածք), Տեառնընդառաջ, Մկրտություն (3բ-4ա), Պայծառակերպություն, Մուտք Երուսաղեմ (5բ-6ա), Ոտնվա, Խաչելություն (7բ-8ա), Ողբ, Հարություն (9բ-10ա), Համբարձում, Հոգեգալուստ (11բ-12ա): Պահպանվել են նաև Հովհաննես ավետարանիչի և Պրոխորոնի, Պետրոս առաքյալի պատկերները՝ համապատասխան անվանաթերթերով:

Տերունական նկարները ներկայացնում են պատկերագրական՝ ինչպես ավանդական, այնպես էլ նորարարական տարրեր ունեցող ուշագրավ հորինվածքներ: Պատկերագրական, կառուցվածքային և ոճական առումով ինքնատիպ են հատկապես Ծնունդը (Հովսեփի անսովոր ընդգծված դիրքով), Պայծառակերպությունը (Քրիստոսի վաղ պատկերագրությամբ և աստվածային երկնքի խորհրդանշական պատկերումով), Հարությունը (Մարիամ Մագդաղենացու միաժամանակ առաջ և ետ նայող կերպարով): Չնայած գրքի փոքր չափերին նկարիչը կարողացել է կանոնական ամբողջականությամբ վերարտադրել տերունական պատկերները: Համբարձման մանրանկարում նա վարպետորեն տեղավորել է 17, իսկ Մուտք Երուսաղեմ տեսարանում՝ 16 մարդկային ֆիգուր, ընդ որում՝ արտահայտիչ դիմագծերով: Շատ հետաքրքիր է, որ մանրանկարիչը յուրաքանչյուր մանրանկարի կոտ կոմպոզիցիան ապահովելուց բացի, նկատի է ունեցել նաև նկարների զուգադիր լինելը էջերի բացվածքում և կարողացել է գտնել ներդաշնակություն ապահովող հո-

on the corresponding title-pages that have survived.

The Lord's images present pictographic creations with both traditional and innovative elements. In the pictographic, constructional and stylistic sense the Birth (with Joseph's unusually accented pose), Transfiguration (with Christ's early pictography and the Heaven's symbolic interpretation), the Resurrection (with Maria Magdalena's figure, simultaneously looking back and forth) are original. Despite the book's small size, the artist succeeded in reproducing the Lord's scenes with canonical entirety. He expertly illustrated accordingly 17 and 16 human figures with expressive features in the miniatures of Ascension and Entering Jerusalem. It is noteworthy that besides providing a solid composition for each miniature the miniaturist also meant the parallel position of the images on the page openings and managed to find balance, giving harmony to the creations. Even though gold occupies a large part on the miniatures (it is used particularly as image coloring), it becomes a harmonic component of the coloring thanks to the general bright coloring.

This manuscript, written for Stepanos Orbelyan by Momik, had an interesting fate thereafter. Almost a century after its creation, in 1406, the manuscript, which was in a very poor condition (with only 158 parchment sheets left), was found by the prominent Archimandrite Grigor Khatetsi, who highly valued the famous scribe and miniaturist, willingly repaired the manuscript, adding 144 paper sheets.¹² A few years later, in 1411, the manuscript was received by an elder named Hovhannes from Artske region, who calls himself a "servant and attendant of King Vasil in a monastery called War at St. Nshan". He named the manuscript "St. Gospel of War"¹³ in the memorial.

Ավետարան, 1302
Համբարձում,
Հոգեգալուստ
(էջ 26, 27)

The Gospel, 1302
Ascension,
Pentecost (Descent of the
Holy Ghost)
(pages 26, 27)



րինվածքային զուգակշիռներ: Մանրանկարներում թեև ոսկին զգալի տեղ է գրավում (օգտագործվելով հատկապես որպես պատկերների խորք), սակայն ընդհանուր վառ գունաշարի շնորհիվ այն կոլորիտի համահունչ մասն է դառնում:

Ստեփանոս Օրբելյանի համար գրված մոմիկյան այս մատյանը հետագայում հետաքրքիր ճակատագիր է ունեցել: Ստեղծումից շուրջ մեկ դար անց՝ 1406 թ., ձեռագիրը խիստ փասված վիճակում անցել է նշանավոր վարդապետ Գրիգոր Խլաթեցու ձեռքը, որն ըստ արժանվույն գնահատելով համբավավոր ստացողին, գրչին ու ծաղկողին, նորոգել է ձեռագիրը, լրացրել թերին 144 թղթյա թերթերով¹²: Մի քանի տարի անց 1411 թ. Արծկեի շրջանում ձեռագիրը ստացել է Հովհաննես անունով մի երեց, որը հիշատակարանում իրեն անվանում է «սպասաւոր և ծառայ Վասիլ թագաւորի պատերազմի Սուրբ Նշանին» (վանքի անունն է), իսկ ձեռագիրը կոչում է «պատերազմի Սուրբ Ավետարան»¹³:

1307 թ. Մոմիկը մետրոպոլիտ Հովհաննես-Օրբելի պատվերով սկսել է մի Ավետարանի գրչություն, որը կիսատ է թողել տեսողության վատացման պատճառով (ձեռագիրն այժմ գտնվում է ԱՄՆ-ում)¹⁴: Սակայն այս ձեռագրում նա մի արժեքավոր հիշատակարան է գրել տասնամյակներ անց՝ 1331 թ., Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս-Տարսայիճի (1314-1331) պատվերով, որին կանդրադառնանք քիչ հետո:

Ստեփանոս Օրբելյանի պատվերով և հովանավորությամբ է իրագործվել Մոմիկի առաջին ճարտարապետական կառույցը՝ Տաթևի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որի արձանագրության մեջ, սակայն, ճարտարապետի անունը չի նշված: Առաջ անցնելով ասենք, որ ճարտարապե-

Ճարտարապետը

և

քանդակագործը

In 1307 Momik started writing a Gospel, ordered by Hovhannes-Orbeli, which he did not finish because of eyesight deterioration (the manuscript is currently in the USA).¹⁴ However, after decades, in 1331 he made a valuable record in this manuscript by the order of Syunik Metropolitan Stepanos-Tarsayij (1314-1331) which we will return to shortly afterwards.

The Architect and Sculptor

It was by the order and sponsorship of Stepanos Orbelyan that Momik created his first architectural composition, St. Grigor the Enlightener Church in Tatev, but the architect's name is not mentioned in its record. We should note that in his architectural and sculptural works Momik always wrote "archimandrite" after his name (Momik vardpet), which shows that he was an architect.¹⁵ Only one of Momik's compositions has a record containing the architect's name: the Areni Church built in 1321, which has "MOMIK VARDPET" carved on the last part of the architect's record next to the relief, decorating the main entrance. However, in the record of a khachkar, created in 1304, the artist calls himself "VARDPET", so he was supposed to be an architect before that. That could have been in Tatev where Momik's protector Stepanos Orbelyan undertook the construction of St. Grigor the Enlightener Church on the southern side of the large cathedral. There is an inscription on the facade stone of the church saying: "As of the year 1295 Ter Stepanos Orbelyan, Metropolitan of Syunik, and the builder of this saint church, remember Christ".¹⁶ It is clear that this kind of official writing could not have extra details, like the name of the architect. However, this church has an architectural detail repeated only in another example of Armenian architecture in a church built by Momik in Areni

տական ու քանդակագործական աշխատանքներում Մոմիկն իր անունից հետո գրում է «վարդպետ» (Մոմիկ վարդպետ), որը ցույց է տալիս նրա ճարտարապետ լինելը¹⁵: Մոմիկի կառույցներից միայն մեկն ունի ճարտարապետի անունը պահպանած արձանագրություն՝ 1321 թ. Արենիի եկեղեցին, ուր գլխավոր մուտքի ճակատը զարդարող պատկերաքանդակի մոտ, կառուցողի արձանագրության վերջին մասում գրված է «ՄՈՄԻԿ ՎԱՐԴՊԵՏ»: Սակայն 1304 թվականին իր կերտած խաչքարի արձանագրության մեջ նույնպես արվեստագետն իրեն կոչում է «ՎԱՐԴՊԵՏ»: Հետևաբար այդ թվականից առաջ նա պետք է հանդես եկած լիներ որպես ճարտարապետ: Դա կարող էր լինել Տաթևում, ուր մեծ տաճարի հարավային կողմում Մոմիկի հովանավոր Ստեփանոս Օրբելյանը նախաձեռնել էր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումը: Եկեղեցու ճակատակալ քարին այդ մասին գրված է. «Ի թվ ՉԽԴ (1295) զՏԷՐ Ստեփաննոս մետրապոլիտ Սիրնեաց, որ է պռատաֆրանտէս Հայոց Մեծաց, որդի մեծափառ իշխանին Տարսաիճին, շինող սուրբ եկեղեցոյս, յիշեցէք ի Քրիստոս»¹⁶: Հասկանալի է, որ այս հանդիսավոր ու պաշտոնական գրությունը չէր կարող ունենալ հավելյալ մանրամասներ, որոնց կարգին կարող է դասվել ճարտարապետի անվան հիշատակությունը: Սակայն այս միանավ եկեղեցին օժտված է ճարտարապետական մի այնպիսի մանրամասնով, որը հայ ճարտարապետության մեջ ունի միայն մեկ կրկնություն, որն էլ Մոմիկի կառուցած Արենիի 1321 թ. եկեղեցում է: Խոսքը վերաբերում է գլխավոր խորանի մեջ բացվող ներքուստ և արտաքուստ խաչաձև երկու կից և դրանցից վեր եղած մեկ կլոր պատուհաններին: Այս և ճարտարապետական մի քանի այլ մանրամասներ

in 1321. That originality is thanks to the two internally and externally crossed parallel windows and one round window on top of those, which open on the main altar. This and other architectural elements let architect Stepanos Mnatsakanyan assume that Momik is the creator of St. Grigor the Enlightener Church in Tatev.¹⁷ The relations between Stepanos Orbelyan and Momik provide a solid base for the above mentioned information.

In 1303, after the death of Stepanos Orbelyan, his uncle's grandson¹⁸ Hovhannes Orbel (1300-1324) succeeded him.¹⁹ He also studied at Gladzor University and still during Stepanos Orbelyan's life was recognized as the prospective Syunik Metropolitan. The first action of Hovhannes Orbel was ordering Momik to make a luxurious khachkar in memory of Stepanos Orbelyan. On the upper part of the subtly weaved khachkar there is an image of Christ, sitting on a four-appearance throne.²⁰ On the lower part is the consecration record, made in 1304, at the end of which it is written "MOMIK VARDPET".²¹

In 1308 by the order of Dame Tamta, the wife of Tarsayij's son, potentate Elikum Orbelyan, Momik creates a magnificent khachkar in Noravank. On the upper part there is the Pleading note, with Christ in the three-arch alcove in the center, the Virgin Mary and John the Baptist in the right and left alcoves. The record of the khachkar ends with the words "REMEMBER MOMIK VARDPET".²²

The client of Momik's third khachkar (cross stone) was also princess Tamta. Here, on the left and right sides of the khachkar, in separate frames, Momik carved the busts of 12 apostles near two of which are written their names: "Petros" and "Andreas".²³


In 1321, by the order of Syunik's Metropolitan Hovhannes Orbeli, Momik built the beau-

ճարտարապետ Ստ. Մնացականյանին թույլ են տվել Տաթևի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումը վերագրել Մոմիկին¹⁷: Ստեփանոս Օրբելյանի և Մոմիկի սերտ առնչության մասին վերը բերված տեղեկություններն ավելի հիմնավոր են դարձնում այս ենթադրությունը:

1303թ. մահանում է Ստեփանոս Օրբելյանը¹⁸, որին հաջորդում է նրա հորեղբոր թոռը՝ Հովհաննես Օրբելը (1300-1324)¹⁹: Նա նույնպես ուսանել էր Գլաձորի համալսարանում և դեռևս Ստեփանոս Օրբելյանի կենդանության ժամանակ ճանաչվել էր որպես Սյունյաց հաջորդ մետրոպոլիտ: Հովհաննես Օրբելի առաջին գործը լինում է Ստեփանոս Օրբելյանի հիշատակին շքեղ խաչքար պատվիրելը, որը նա հանձնարարում է Մոմիկին: Նրբահյուս հարդարանքով խաչքարի վերնամասում պատկերված է Քրիստոսը չորեքկերպյան գահին բազմած²⁰, իսկ ստորին մասում 1304 թվականի ընծայական արձանագ-


Տաթևի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ընդհանուր տեսքը և խորանը

The general appearance and the altar of St. Grigor the Enlightener Church in Tatev



Արենիի Ս. Աստվածածին եկեղեցին արևելքից և հատակագիծը

St. Astvatsatsin Church of Areni from the eastern side and its plan



tiful church of St. Astvatsatsin (Holy Virgin) in Areni. It is a concentrically domed composition, which has a decorative and structural uniqueness when compared with other churches of the same style. In particular, seldom are the sculptures of the four apostles' symbols (the winged man, the bull, the lion and the eagle) in the interior made on an intact stone canopy. It is very impressive; a man's portrait with wide-spread angel's wings, flying in the sky, and with his right hand giving blessings and with the left holding a gospel. Also very at-

րությունն է, որի վերջում հիշատակվում է՝ «ՄՈՄԻԿ ՎԱՐԴԱԵՏ»²¹:

1308 թ. Տաթայիճի որդի Էլիկում Օրբելյան իշխանի կնոջ՝ Թամթա խաթունի պատվերով Մոմիկը Նորավանքում մի հույակապ խաչքար է կերտում: Խաչքարի վերնամասում Բարեխոսության հորինվածքն է՝ կենտրոնում եռակամար խորշի մեջ Քրիստոսը, աջ և ձախ կողմերի խորշերում՝ Աստվածածինը և Հովհաննես Մկրտիչը: Խաչքարի արձանագրությունն ավարտվում է «ՄՈՄԻԿ ՎԱՐԴԱԵՏ ՅԻՇԵՑԷՔ» բառերով²²:

Մոմիկի երրորդ խաչքարի պատվիրատուն դարձյալ Թամթա իշխանուհին է: Այստեղ խաչի աջ ու ձախ կողմերում առանձին շրջանակների մեջ Մոմիկը քանդակել է տասներկու առաքյալների կիսանդրիները, որոնցից երկուսի մոտ գրել նաև նրանց անունները՝ «ՊԵՏՐՈՍ», «ԱՆԴՐԷԱՍ»²³:

Սյունյաց մետրոպոլիտ Հովհաննես-Օրբելի պատվերով Մոմիկը 1321 թվականին կառուցել է Արենիի Ս. Աստվածածին գեղաշեն եկեղեցին: Այն կենտրոնագմբեթ շինություն է, որը նմանատիպ կառույցների




Ստեփանոս Օրբելյանի հիշատակի խաչքարի վերնամասը, 1304

Թամթա խաթունի խաչքարը, 1308

The upper part of Stepanos Orbelyan's memorial Khachkar, 1304

Dame Tamta's Khachkar, 1308





Թամթա խաչքունի
երկրորդ խաչքարը

Dame Tamta's second
Khachkar

tractive is the ornament on the front stone of the entrance to the church. Here on the flowery background is depicted the Holy Virgin holding the Child²⁴. The child seems to have leant forward. This same posture can be seen on the "Holy Virgin with the Child" sculpture at the entrance to Noravank's parvis²⁵.

The parallels of these two creations, as well as some other facts, show that the parvis of Noravank's main church St. Stepanos²⁶, built in 1261, was reconstructed and decorated with sculptures of the front slab of the entrance and windows in the first decades of the 14th century, with a design considered to be Momik's²⁷. Concerning this M. Hasratyan writes: "There is an incontestable hereditary connection between these two works. The low relief of Areni's church had preceded and had been an example for a more refined low relief of Noravank's parvis with the same theme."²⁸

In particular, the sculpture, surrounding the western window, is very meaningful and expressive. The central part is decorated with a unique representation of the big image of the Father blessing the Crucifix with his right hand and holding in his left hand the head of Adam, with a dove – the Holy the Spirit – above it. In the center is depicted large portrait of the Father which is a rare occurrence in Armenian medieval architecture because the Father was always represented in a symbolic way. On the left hand is carved the crucifixion. So, when viewed as a whole, the Holy Trinity is presented. Also seen is that Jesus Christ appears as a 'new Adam'. This work is a vivid example that the creator of these sculptures is not only a master of arts, but also has deep theocratic and pictographic knowledge. The sculptures of Noravank's parvis are invaluable not only for Armenian, but for Christian architecture in general²⁹.

Արենի եկեղեցին
հյուսիսից

The Church of Areni
from the North



համեմատությամբ ունի հատակագծային և հարդարանքի յուրահատկություններ: Մասնավորապես եզակի են ինտերիերում միակտոր քարից պատրաստված առագաստների վրա տեղավորված չորս ավետարանիչների մեծադիր խորհրդանշանների քանդակները՝ թևավոր մարդը, եզը, առյուծն ու արծիվը: Տպավորիչ է հատկապես հրեշտակի փոված թևերով, ասես երկնքում ճախրող մարդու պատկերը, որը աջ ձեռքով օրհնում, ձախում՝ ավետարան է պահում: Ուշագրավ է նաև եկեղեցու մուտքի ճակատակալ քարի քանդակապատկերը: Այստեղ ծաղկափյուռ ֆոնի վրա պատկերված է գորգին նստած Աստվածամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին²⁴: Մանուկն, ասես շրջվել, մի փոքր առաջ է եկել: Նույն շարժումն ենք տեսնում Նորավանքի գավիթի մուտքը զարդարող՝ «Աստվածամայրը մանկան հետ» քանդակում²⁵:

Այս երկու ստեղծագործությունների գուգահեռները և մի քանի այլ հանգամանքներ վկայում են, որ Նորավանքի գլխավոր՝ Ս. Ստեփանոս եկեղեցու²⁶ 1261 թ. կառուցված գավիթը XIV դարի առաջին տասնամյակներին նորոգվել է, զարդարվել մուտքի և պատուհանի ճակատակալ սալերի քանդակներով, որոնց հեղինակ է համարվում Մոմիկը²⁷: Այս առնչությամբ Մ. Հասրաթյանը գրում է. «Գոյություն ունի անվիճելի ժառանգորդական կապ այս երկու ստեղծագործությունների միջև. Արենիի հարթաքանդակը նախորդել է և սկզբնօրինակ է ծառայել Նորավանքի գավիթի նույն թեմայով ավելի կատարյալ մշակված բարձրաքանդակի համար»²⁸:

Ինքնատիպ ու խորինաստ է հատկապես գավիթի արևմտյան լուսամուտը պսակող քանդակը: Կենտրոնում ներկայացված է Հայր Աստծո խոշոր պատկերը, որը հայ միջնադարյան քանդակագործության մեջ

A two-storey church mausoleum, known as Burtelashen ("Burtel-built"³⁰) after the name of its founder, is situated to the south of Noravank. With its harmonious rotunda this church is the birth of Momik's brave architectural cogitation. The dimensional solution of this composition was also a novelty in Armenian architecture. As it was mentioned above, in one of the miniatures of the Gospel, made in 1292, Momik depicted such a composition; actually he had had an idea which was later realized in Noravank.

St. Astvatsatsin Church is decorated with special splendor and unique expressiveness. The triangle-shaped stairs, leading to the vestibule of the second floor with decorative front stones and other ornamental details, create an inimitable architectural form³¹.

Եկեղեցու պատկերով
լուսանցազարդ 1292 թ.
Ավետարանից

From the margin-decorated
Gospel of 1292 with
a picture of a church





Արենիի եկեղեցու և
Նորավանքի գավթի
մուտքի բարավորների
պատկերաքանդակները

Բուրթելաշեն
Ս. Աստվածածին
եկեղեցին XX դարի
կեսերին և 1997-98 թթ.
նորոգման ժամանակ



The sculptures on the
front stones of Areni
Church and Noravank's
parvis's entrance

Burtelashen
St. Astvatsatsin Church
in the middle of the XX
century and during the
reconstruction in 1997-98



սակավաղեայ է, քանի որ Հայր Աստծուն սովորաբար պատկերում էին խորհրդանշական ձևով: Աստծո ձախ ձեռքին Ադամի գլուխն է, որի վրա իջնում է աղափսակերպ Սուրբ Հոգին: Ձախ կողմում քանդակված է Խաչելությունը: Այսինքն ողջ տեսարանում առկա են Սուրբ Երրորդության երեք անձերը: Դիտելի է նաև Քրիստոսի՝ որպես «նոր Ադամի» հանդես գալու իրողությունը: Այս գործը վկայում է, որ քանդակների հեղինակն օժտված էր ոչ միայն կատարման վարպետությամբ, այլև աստվածաբանական ու պատկերագրական հարուստ գիտելիքներով: Նորավանքի գավթի պատկերաքանդակները բացառիկ արժեք են ներկայացնում ոչ միայն հայ, այլև քրիստոնեական արվեստի մեջ ընդհանրապես²⁹:

Ժամանակին Ս. Բարխուդարյանը Մոմիկին է վերագրել նաև Սպիտակավոր Ս. Աստվածածին վանքի եկեղեցու (1321 թ.) կառուցումը (Դիվան հայ վիմագրության, պր. 3, էջ 95): Բոլորովին վերջերս պարզվեց, որ այս եկեղեցու գմբեթի ներսում եղած քանդակում պատկերված է ոչ թե Քրիստոսը (ինչպես կարծել են որոշ ուսումնասիրողներ), այլ Հայր Աստված, ձեռքին՝ Ադամի գլուխը, որի վրա իջնում է Սուրբ Հոգին: Այստեղ ակներևորեն կրկնված է Նորավանքի գավթի համապատասխան քանդակի կառուցվածքը:

Մոմիկի ճարտարապետական համարձակ մտքի ծնունդն է Նորավանքի հարավային կողմում Բուրթել իշխանի³⁰ կառուցած պաղիկ ռոտոնդայով պսակված երկհարկ եկեղեցի-դամբարանը: Բուրթելյան Ս. Աստվածածինը ծավալատարածական լուծումը նորություն էր հայկական ճարտարապետության մեջ: Ինչպես վերևում նշեցինք, 1292 թվականին նկարագարդած Ավետարանի լուսանցագարդերից մեկում Մոմիկը պատկերել է նման մի

Հայր Աստծո քանդակը
Նորավանքում
և Սպիտակավոր
Ս. Աստվածածին
եկեղեցում

The sculpture of God the
Father in Noravank and in
Spitakavor St. Astvatsstin
Church



Բուրթելաշեն
Ս. Աստվածածին
եկեղեցին

St. Astvatsatsin Church
of Burtelashen



կառույց, որը փաստորեն, մտահղացում է և հետո իրականացվել է Նորավանքում:

Ս. Աստվածածին եկեղեցի-դամբարանն օժտված է գեղարվեստական արտակարգ գրավչությամբ ու արտահայտչականությամբ: Փառահեղ է հատկապես արևմտյան ճակատի ինքնատիպ ու շքեղ ձևավորումը: Գետնից մինչև երկրորդ հարկի շքամուտք տանող աստիճանները յուրօրինակ եռանկյունաձև շրջանակ կազմելով առաջին հարկի մուտքի համար, զուգակցվելով քանդակագարդ բարավորների ու զարդաքանդակ այլ մանրամասների հետ, ստեղծում են ճարտարապետական անկրկնելի կերպար³¹:

Բուրթելաշեն Ս. Աստվածածին եկեղեցու վրա պահպանվել է նրա կառուցման թվականը՝ 1339, իսկ Մոմիկի հիշատակի համար Նորավանքում կանգնեցված խաչքարի արձանագրության մեջ գրված է արվեստագետի մահվան թվականը՝ 1333 թ.՝ «ՅԻՇԵԱ ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ



Բուրթելաշեն
Ս. Աստվածածին
եկեղեցու մուտքի
քանդակը

Բուդտայի խաչքարի
ստորին մասը, 1318

The entrance sculpture
of Burtelashen
St. Astvatsatsin Church

The lower part of Bughta's
Khachkar, 1318

On Burtelashen St. Astvatsatsin Church has remained the year of construction 1339, and on the inscription of the khachkar in Noravank, made in Momik's memory, is carved the death date of the great artist, 1333: "Remember, Jesus God, Momik's soul and show mercy (1333)"³². According to this, different examiners have suggested different opinions about the architect of Burtelashen, but, in our opinion, it is closer to reality to suggest that the construction started with Momik's project and was continued by his students because of the artist's death. This is the most accepted viewpoint. Near Burtelashen's north-western corner stood a khachkar on a pedestal made at the construction. Burtel dedicated this khachkar to the memory of his brother Bughta who was killed in 1318³³. In our opinion, this can mean that the construction of Burtelashen had already been started by that time, approximately in 1319-1320. It is known that Momik finished the church of Areni in 1321 and his death in 1333 could slow down the construction for some years. Considering all these facts we can say with more confidence that the construction of Burtelashen St. Astvatsatsin Church started when Momik was alive.



ԶՄՈՄԿԱ ՀՈԳԻՆ ԵՒ ՈՂՈՐՄԵԱ: ԹՎ ԶԶԲ: (1333)³²»: Սրանից ելնելով տարբեր ուսումնասիրողներ Բուրթելաշենի ճարտարապետի մասին տարբեր տեսակետներ են առաջ քաշել, սակայն մեր կարծիքով իրականությանն ամենից մոտ է այն, որ Մոմիկի նախագծով սկսվել է կառույցը, որից հետո, արվեստագետի մահվան պատճառով, շինարարությունը շարունակել են նրա աշակերտները: Սա նաև առավել ընդունված տեսակետն է: Ավելացնենք, որ Բուրթելաշենի հյուսիս-արևմտյան անկյան մոտ, կառույցին կից պատրաստված պատվանդանի վրա կանգնած է եղել մի խաչքար, որը Բուրթելը ձոնել է իր 1318 թ. սպանված եղբոր՝ Բուդտայի հիշատակին³³: Մեր կարծիքով, սա կարող է նշանակել, որ Բուրթելաշենի կառուցումը սկսվել էր արդեն այդ ժամանակ՝ մոտավորապես 1319-20 թվականներին: Հայտնի է, որ Մոմիկն Արենիի եկեղեցին ավարտել է 1321-ին, իսկ 1333-ին նրա մահը կարող էր Բուրթելաշենի շինարարությունը մի քանի տարով դանդաղեցնելու պատճառ դառնալ: Այս հանգամանքները ևս հաշվի առնելով կարող ենք ավելի համոզված ասել, որ Բուրթելաշեն Ս. Աստվածածին եկեղեցու շինարարությունը սկսվել է Մոմիկի կենդանության օրոք:



Բուրթելաշեն
Ս. Աստվածածին
եկեղեցու ճակատի
հատվածներ

The front sections
of Burtelashen
St. Astvatsatsin Church



Համառոտակի անդրադառնանք Մոմիկի ընտանիքին վերաբերող որոշ տվյալների, որոնց մի մասն ի հայտ են եկել բոլորովին վերջերս: Այդ նորահայտ նյութերը ոչ մի կասկած չեն թողնում, որ Մոմիկը ծնունդով Վայոց ձորից էր³⁴:

Դեռևս 1955 թ. Ռինդ գյուղի մերձակայքի Վերին Ուլգյուր գյուղատեղի ավերակ եկեղեցու գերեզմանատանը Ս. Բարխուդարյանը հայտնաբերել է խաչքարի վրա գրված մի արձանագրություն, ուր հիշատակվում են Մոմիկի որդին՝ Ասկանդար անունով («ԵՍ ԱՍԿԱՆԴԱՐ, ՄՈՄԿԱ ՈՐԴԻ...») և վերջինիս որդին՝ Շատոնիկը³⁵: Ս. Բարխուդարյանը նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մոմիկի որդին արձանագրության մեջ նշում է, թե իր հայրենի (սեփական) հողի մի մասը նվիրատվություն է անում, ենթադրել է, որ այդ գյուղը Մոմիկի ծննդավայրն է եղել:

2004 թ. հիշյալ բնակավայրի արևելյան մասում գտնվող Ներքին Ուլգյուր գյուղատեղի (Աղավաճոր գյուղից մոտ 5 կմ հյուսիս-արևմուտք) Ս. Աստվածածին եկեղեցու մոտ հայտնաբերվել են Մոմիկի ազգականներին պատկանող տապանաքարեր³⁶: Դրանց մեջ շատ արժեքավոր է Մոմիկի ծնողների տապանաքարը, որի արձանագրությունը հետևյալն է. «ԶՀԱՅՐ ԵՒ ԶՄԱՅՐ ՄՈՄԿԱ ԶԳՐ(Ի) ԳՈՐ ԵՒ ԶԱՎԹԱՅՆ ՅԻՇԵՑԷՔ :ԹՎ: ՉԽԷ (1298)»: Սրանով հաստատվում է, որ Մոմիկը Վերին կամ Ներքին Ուլգյուրի ծնունդ է:

Մեկ այլ տապանաքարի արձանագրության մեջ հիշատակվում են Մոմիկի եղբայր Գոհարտաշը և իր դուստր Խլաթը, որոնք մահացել են 1333 թվականին. «ԳՈՀԱՐՏԱՇՆ Է, ԵՂԲԱՅՐ ՄՈՄԿԱ ԵՒ ԴՈՒՍՏՐ ԻԻՐ ԽԼԱԹ: ԹՎ: ՉՁԲ (1333): Այս տապանաքարին կից հայտնաբերվել

Տեղեկություններ

Մոմիկի տոհմի

մասին

Ներքին Ուլգյուրի
եկեղեցին և
տապանատունը

The church and crypt
of Nerqin Ulgyur

Information about Momik's origin

We will present some facts about Momik's family, some of which have been discovered recently. These newly discovered details leave no doubt that Momik was originally from Vayots Dzor³⁴:

In 1955 near the village Rind, in the cemetery of Verin Ulgyur's wrecked church, S. Barkhudaryan found an inscription on a khachkar where Momik's son Askandar is mentioned (I am Askandar, the son of Momik) and grandson Shatonik is also mentioned here³⁵. S. Barkhudaryan, considering the fact that Momik's son mentioned in the inscription that he had donated a part of his own land, assumed that it was Momik's birthplace.

In 2004, to the east of the mentioned place near St. Astvatsatsin Church of Nerqin Ulgyur (about 5 km north-west to Aghavnadzor) some gravestones of Momik's relatives were found³⁶. Especially valuable among them is the gravestone of Momik's parents, and the inscription on it says: "Momik's fa-



է մեկ ուրիշը, որը պատկանում է Մոմիկի եղբոր որդուն. «ԽԱՋԻ Է: ՈՐԴԻ ԳՈՀԱՐՏԱՇԻՆ: Ի ՄԻՈՒՄ ԱԻՈՒՐ ԵՒ ԹՎԻ»: Նկատի ունենալով, որ երկու տապանաքարերը կից են և գրված է «Ի ՄԻՈՒՄ ԱԻՈՒՐ ԵՒ ԹՎԻ», արձանագրության հրատարակիչներն իրավացիորեն ենթադրել են, որ Խազին կամ Խազեն իր հոր և քրոջ հետ մահացել է նույն ժամանակ (նույն տարվա նույն օրը): Տապանաքարերից մեկի վրա էլ պահպանվել է Գոհարտաշի տիկնոջ՝ Խերիկի անունը, բայց մահվան թվականն անընթեռնելի է:

Ինչպես վերևում նշեցինք, Նորավանքում Մոմիկի հիշատակին կանգնեցված խաչքարի արձանագրության մեջ գրված է նրա մահվան թվականը՝ ՉՁԲ (1333): Նրա եղբոր ու վերջինիս երկու զավակների տապանաքարերի տվյալները բերում են



Մոմիկի հիշատակի
խաչքարը, 1333

Khachkar in memory of
Momik, 1333

ther Grigor and mother Zavtayn, remember them (1298)”. It is proved by this that Momik was either from Verin Ulgyur or Nerqin.

In another gravestone’s inscription Momik’s brother Gohartash and his daughter Khlat, who died in 1333, are remembered: “This is Gohartash, the brother of Momik and his daughter Khlat (1333)”. Near this grave another one was found which belonged to Momik’s nephew: “Khazi, son of Gohartash, near each other and died on the same date”. The publishers of inscriptions justly assumed that Khazi died at the same time as his father and sister (on the same day of the year). On one of the gravestones the name of Gohartash’s wife, Kheriki, was also mentioned, but the date of death is unreadable.

As it was mentioned above, the date of Momik’s death was written in the inscription of the khachkar placed in Momik’s memory in Noravank (1333). The inscriptions on his brother’s and the latter’s two children’s gravestones bring the conclusion that in 1333 a fatal tragedy happened to this family; maybe they became victims of an epidemic or a hostile attack. In any case, it is difficult to find another explanation for why both father and son died on the same date. It is not excluded that Momik could also have been with them on that day.

The inscriptions found in Verin and Nerqin Ulgyur gave an opportunity to examiners to make Momik’s genealogical tree³⁷. Only some facts about another Armenian medieval architect Siranes’s family from Noravank are known³⁸. Of other benefactors only names have remained such as Trdhat, the architect of Ani, and Manvel, the architect of Aghtamar. Thanks to the gravestones found in 2004, the richest genealogical tree is Momik’s with his four generations’ sequence.

այն եզրակացության, որ 1333 թվականին այս ընտանիքի հետ մի ճակատագրական դժբախտություն է պատահել, հնարավոր է զոհ են գնացել համաճարակին կամ թշնամական հարձակման: Համենայն դեպս, հոր և երկու զավակների նույն օրը մահացած լինելու փաստի համար դժվար է այլ բացատրություն գտնել: Չի բացառվում, որ այդ չարաբաստիկ օրը նրանց հետ է եղել նաև Մոմիկը:

Վերին և Ներքին Ուլգյուր հնավայրերում հայտնաբերված արձանագրությունները ուսումնասիրողներին հնարավորություն են տվել կազմելու Մոմիկի տոհմաձառը³⁷: Հայ միջնադարյան ճարտարապետներից միայն Նորավանքի մեկ այլ երախտավորի՝ Սիրանեսի տոհմի մասին են մի քանի տվյալներ հայտնի³⁸, մյուս մեծերի՝ Անիի ճարտարապետ Տրդատի կամ Աղթամարի ճարտարապետ Մանվելի միայն անուններն են պահպանվել: 2004-ին հայտնաբերված տապանաքարերի շնորհիվ առայժմ ամենից հարուստ, չորս սերնդի հաջորդականությամբ տոհմաձառ ունեցողը Մոմիկն է:

Գր(ի)գոր (+1298) – կինը՝ Ավթա (+1298)

Մոմիկ (+1333) Գոհարտաշ (+1333) – կինը՝ Խերիկ

Ասկանդար Խլաթ (+1333) Խազի (+1333)

Շատոնիկ

Արենիի
Ս. Աստվածածին
եկեղեցին հարավից

S. Astvatsatsin Church in
Areni from the South





Արենիի
Ս. Աստվածածին
եկեղեցու գմբեթի
կամարադեղիները
և քանդակները

The arches of the dome
of St. Astvatsatsin Church
in Areni

Արդյո՞ք Մոմիկն ունեցել է աշակերտներ: Չնայած համապատասխան պատմական վկայությունների բացակայությանը, կարելի է չկասկածել, որ այդպիսիք անպայման եղել են, քանի որ աշակերտներ, օգնականներ ունենալը միջնադարյան վարպետների աշխատանքի անբաժան մասն էր: Պետք է նշել, որ Նորավանքն ընդհանրապես քանդակագործական ավանդների կենտրոն է եղել: Այստեղ շնորհալի արվեստագետներ են աշխատել նաև Մոմիկից առաջ և հետո, իսկ նրա ժամանակ ապրածներն անկասկած կրել են մեծ վարպետի ազդեցությունը, սովորել նրանից: Հնարավոր է, որ եղել են նաև Մոմիկի գծագրերով, խորհուրդներով, բայց այլ վարպետների պատրաստած խաչքարեր, որոնցից մեկը կարելի է համարել վերևում նշված՝ Բուրթելի իշխանի եղբոր հիշատակին պատվիրած խաչքարը: Մեկ այլ մոմիկյան նորարարական շնչով և չափազանց ուշագրավ պատկերագրությամբ խաչքար, որը 1332 թվականից է, այժմ դրված է Նորավանքի գավիթում⁹⁹: Մոմիկի Նորավանքում ստեղծագործելու ժամանակին են վերաբերում նաև Ս. Գրիգոր եկեղեցի-տապանատանը և վանքի բակում դրված երկու ինքնատիպ, առյուծաքանդակ տապանաքարերը, որոնք պատկանում են այլազգիների դեմ քաջաբար կռված և նահատակված Էլիկում Օրբելյանին (1300 թ.) ու պարոն Սարգսին (1331 թ.):

Ինչպես վերևում տեսանք արվեստագետի ծնողների՝ Գրիգորի և Ավթայի, տապանաքարի 1298 թ. արձանագրության մեջ նշված է, որ նրանք Մոմիկի հայրն ու մայրն են, ինչը վկայում է, որ արդեն այդ ժամանակ նա մեծ հեղինակություն ունեցող մարդ էր:

Ժամանակին և հետագայում Մոմիկի վայելած համբավի ու ժողովրդականու-

«Վարպետաց վարպետի» բարի հիշատակը

Պարոն Սարգսի
հիշատակությամբ
խաչքարը (մոմիկյան
դպրոց), 1332

Khachkar in memory
of Mr. Sargis (Momik's
school), 1332




թան մասին է վկայում նրա անվան հետ կապված ավանդազրույցի գոյությունը: Ժողովրդական բանահյուսությանը հատուկ ոճով կառուցված այդ գողտրիկ պատումը, ուր խոսվում է շնորհալի ճարտարապետի՝ Սյունյաց իշխանի աղջկան սիրահարվելու, իշխանի՝ գեղեցիկ վանք շինելու դեպքում աղջկան վարպետին կնության տալու խոստման և պայմանը կատարելուց՝ վանքը շինելուց հետո խոստմնազանց իշխանի հրամանով Մոմիկին գմբեթից հրելու, ցած գցելու մասին⁴⁰, թեև հեռու է իրական պատմություն լինելուց, բայց, հավանաբար ունի վավերական ենթաշերտ՝ մասնավորապես Մոմիկի՝ սկսած կառույցն անավարտ թողած կյանքից հեռանալու հանգամանաքի առումով, եթե նկատի ունենանք Բուրթե-լաշեն եկեղեցու պարագան:

Իսկ ընդհանրապես, հարկ է նշել, որ թեև միջնադարյան հիշատակարանները հիմնականում հնարավորություն չեն տալիս գրիչների ու մանրանկարիչների ան-

Էլիկում Օրբելյանի
առյուծաքանդակ
տապանաքարը
(մոմիկյան դպրոց), 1300

Elikum Orbelyan's lion-
shaped gravestone
(Momik's school), 1300



A question arises whether or not Momik had students. Although such historical facts are lacking, it cannot be doubted that he had them because the presence of students and helpers was an important part of a medieval architect's work. It should be noted that Noravank was the center of sculptural traditions in general. Very talented masters worked here both before and after Momik, and his contemporaries definitely bore his influence. It is possible that other masters also made khachkars by Momik's advice or in his manner. One of them can be considered to be the above mentioned khachkar made in memory of lord Burtel's brother. Another khachkar of 1332 with very attractive decorations and with innovative breath is now placed in Noravank's parvis³⁹. Two lion-shaped grave-stones which are placed in St. Grigor Church mausoleum and in the yard of the monastery also belong to the creative work of Momik. They are dedicated to Elikum Orbelyan (1300), who struggled bravely against enemies and Mr. Sargis (1331).



հատականության, նրանց անձնական ապրումների մասին պատկերացում կազմելու, քանի որ մեծ մասամբ ներկայացնում են ընդհանուր և կաղապար ձևակերպումներ: Սակայն արվեստագետներից առավել տաղանդավորները կարողացել են թեկուզ մի քանի բնորոշ բառերով որոշակի տպավորություն ստեղծել: Այդպես են նաև Մոմիկի հիշատակարանները, որոնք միայն միջնադարյան մարդու «մեղավորության» արտահայտիչը չեն, այլ նաև պարուրված են մի ինչ-որ անբացատրելի թախսիծով: 1292 թվականի հիշատակարանում Մոմիկը գրչական կարծեցյալ սխալների համար ընթերցողի ներողամտությունը հայցելով (ընդունված ձևակերպում է), այնուհետև դրա պատճառը բացատրում է յուրովի՝ «զի բեկ սրտիս և թախանձեալ մարմնով գրեցաւ»⁴¹: Իսկ 1302 թ. հիշատակարանում նույն հանգամանքը մեկնաբանում է հետևյալ խոսքերով. «Զի... թէպէտ անհմուտ էի, այլ ժամանակս ձմեռն էր և տունս նսեմ...»⁴²:

1331 թ. Մոմիկը Նորավանքում գրել է մի ձեռագրի հիշատակարան, ուր պատմում է մատյանի ստեղծման նախապատմությունը: Ըստ նրա 1307 թվականին ինքը Նորավանքում սկսել է այդ ձեռագրի գրչությունը՝ Հովհաննես Օրբելի հանձնարարությամբ՝ Բուրթել իշխանի համար, սակայն շուտով տեսողության կորստի պատճառով չի կարողացել գործը շարունակել. «Ես Մոմիկ գրիչ, յաչաց վատեալ... զոսկենկարսն ոչ կարացի ի գլուխ հանել, աւաղ և եղուկ իմոյ տկարութեանս, զի իմով ձեռամբ ոչ եղև...»: Մատյանի գրչությունն ու ծաղկումն ավարտել են Մոմիկի գործընկերները՝ Հովհաննես գրիչն ու Թորոս նկարիչը: Որոշ ժամանակ անց Աստծո գթասրտությանն ապավինած Մոմիկի տեսողությունը վերականգնվել է և նա գրել է ձեռագրի հիշատակարանը. «Յուսովս որ առ Յի-

The good memory of “The master of masters”

As we saw above, it was mentioned in the inscription of Momik's parents' gravestone (1298) that they were his father and mother, which shows that at that time Momik was a man with great authority.

Both at that time and later a legend existed about Momik which shows his reputation and popularity. It tells that the gifted architect was in love with the daughter of Syunik Prince. The prince promised to marry his daughter to Momik if he built a beautiful monastery. But after the condition was implemented and the monastery was built, the prince broke his promise and by his order Momik was pushed off the dome and fell down to his death⁴⁰. This small tale with its special style of folklore, although being far from reality, probably has its roots in facts, particularly the fact that Momik died before the end of the construction if we consider the case of Burtelashen Church.

But, in general, it should be noted that although medieval memorials don't give an opportunity to know the individuality and personal feelings of miniaturists (because they mainly present general formulations) some talented architects were able to create an impression with some typical words. Momik's memorials are also like that. They not only represent medieval human's "culpability", but have some kind of inexplicable grief. In the memorial of 1292 Momik asks forgiveness from readers for supposed mistakes (this was a common form) and then explains the reasons in his own way: "He wrote it with sadness and melancholy"⁴¹. And in the memorial of 1302 he explains the same thing in this way: "Although I didn't have experience, but the reason was the winter and my house was gloomy"⁴².

In 1331 Momik wrote a memorial to a manuscript where he talks about the prehistory

սուս, զկնի սակաւ ամաց յոյս աչաց իմոց դարձաւ առ իս ի թոփս ՉՉ (1331) և գլիշատակարանս արարի և գրեցի...»⁴³: Ահավասիկ մեծ արվեստագետի կենսագրությունը վայել մի իրական հրաշք...

Մոմիկի մասին մեր գիտելիքները սահմանափակվում են այսքանով, թեև նրա եզակի անունն էլ⁴⁴ կարող է հուշել, որ փոքրամարմին ու նուրբ կառուցվածքով մարդ է եղել: Չի բացառվում, որ գլաձորյան ուսումնառության ժամանակ նա Մոմիկ մականունն է ստացել ու այն ընդունել, իբրև պատվանուն, որովհետև մոմն ու մոմիկը վառվում են որպես աղոթք՝ Աստծո փառքի համար: Իր ստեղծագործություններն էլ՝ լինեն մագաղաթի, թե կարծր քարի վրա, մեծ հավատով, գործի փայլուն իմացությամբ և ոսկերչական նրբությամբ են ստեղծված, որով ասես ներդաշնակվել են արվեստագետի ներքինն ու արտաքինը, անունն ու գործը:

Իսկ արվեստի մոմիկյան ժառանգությունն իր կատարման վարպետությամբ, ինքնատիպությամբ ու գեղարվեստական որակներով, գաղափարական-աստվածաբանական խորքով, պատմական հնչեղությամբ, հայ մշակույթի անանց շքեղություններից է:

Արենիի
Ս. Աստվածածին
եկեղեցու
Մաթեոս Ավետարանչի
խորհրդապատկերով
բարձրաքանդակը

St. Astvatsatsin Church
in Areni
The bas-relief with the
symbol of Matthew
the Evangelist



of the journal's creation. According to him, in 1307 he started the miniature of that manuscript by the order of Hovhannes Orbeli, dedicated to Prince Burtel, but was unable to continue the work because of the loss of vision: "I, miniaturist Momik, unfortunately couldn't finish my painting because my eyesight got worse and because of my weakness which wasn't my fault...". The memorial's flowering and the miniature were finished by Momik's partners, the miniaturist Hovhannes and artist Toros. After some time Momik, who had relied on God's mercy, had his vision recovered and he wrote a memorial to the manuscript: "My only hope was Jesus Christ, and with his help my vision is recovered (1331) and I am writing my memorial..."⁴³.

Indeed, a real magic worthy of a great artist's biography...

Our knowledge about Momik is limited to this, although it can be assumed from his unique name⁴⁴ that he was a skinny man with a small body. It is not discarded that Momik's nickname was given to him during his glazioric studies, and he accepted it with respect because momik (candle) is lit in prayer for God's brightness. His creations, both on parchments and on hard rock, were made with great faith, mastery and jewelry skills, and where master's inside and outside, name and work became harmonious.

Momik's art heritage with its excellence of mastery, uniqueness, artistic quality, ideological-theological depth and with its historical response can be fairly considered a part of Armenian cultural splendor.



Արենիի
Ս. Աստվածածին
եկեղեցու խորանի
խաչաձև լուսամուտները

The cross-shaped windows
of the altar (sanctuary)
of St. Astvatsatsin Church
in Areni

¹ Ձեռագրի հիշատակարաններում նշվում է երկու թվական, սկզբում՝ 1283 թ., այնուհետև չափածո հիշատակարանում 1284 թ. (ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմող՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 551, 553):

² «Առաջին տառն սքանչելի,
Նկարագրեալ Մոմիկ գրչի,
Գեղաղէշ և պիտանի,
Պիղծ հարամիք տարան գերի»:
(ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ..., էջ 601):

³ Այս ձեռնադրությամբ Ստեփանոս Օրբելյանը դառնում է ոչ միայն մետրոպոլիտ Սյունյաց, այլև «...պատառափրանտէս պատրիարքին Հայոց, այսինքն՝ նախաթոռ լինել և գլուխ ամենայն եպիսկոպոսաց Հայոց» (Ստեփանոս Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 313, 351):

⁴ «Բայց այս երկուսի համար էլ մեկ եպիսկոպոսություն պիտի լինի՝ մեկ առաջնորդով ու իշխողով. և ով որ եպիսկոպոս լինի, չհամարձակվի երկու հայացքով ու երկու մտքով նայել սրանց՝ մեկի նկատմամբ առավել հոգ տանելով» (Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 375):

⁵ Ստեփանոս Օրբելյանը Տաթևի վանքի համար պատրաստել է տալիս նաև հսկայական զանգեր, որոնք հասել են մինչև մեր օրերը: Իսկ իր նշանավոր պատմագրական երկը՝ «Պատմություն նահանգին Սիսական», որն ինչպես հիշատակարանում է նշում, գրել է Նորավանքում («...նյութերը հավաքվելուց հետո գիրքը շարադրվեց... Նորավանքի այս վանքում և փառաբնակ ուխտում»), այնուհետև ընծայել է Տաթևի վանքին՝ «Եւ այս մատյանը... տարանք, ընծայեցինք Տիրոջ տանը՝ որպես նվիրական ընծա Տաթևի կաթողիկէ և առաքելական եկեղեցուն...» (Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 391-392):

⁶ ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմող՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 678:

⁷ ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 677-678: Գլխավոր հիշատակարանից բացի Մոմիկը ձեռագրում գրել է նաև փոքր հիշատակագրություններ՝ կարմիր, գեղազիր տառերով: Մի տեղ (թերթ 147ա) իր անունը գրել է հունարեն:

⁸ Մ. Հասրաթյան, Հայ ճարտարապետության և քանդակագործության նորահայտ հուշարձաններ Նորավանքում, ՀՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ., 1984, N 8, էջ 60, 65:

⁹ Նույն տեղում, էջ 679:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Ս. Մաղումյան, Նորահայտ վիմագրեր Նորավանքից, «Հուշարձան» տարեգիրք Բ, Երևան, 1993, էջ 99:

Ծանոթագրություններ



Comments

¹ In manuscript memorials there are two dates noted; first 1283, and afterwards in a poetical memorial in 1284 (13th Century Armenian Manuscript Memorials, composed by A. Matevosyan, Yerevan, 1984, p. 551, 553).

² "First letter gorgeous,
Featured by Momik the scribe,
Fine and helpful,
The vicious robber was captured"

(13th Century Armenian Manuscript Memorials, p. 601).

³ With this ordination Stepanos Orbelyan not only becomes the Metropolitan of Syunik, but also "... to be the first and head of all Bishops of Armenians" (Stepanos Orbelyan, History of Sisakan State, Tbilisi, 1910, p. 313, 351).

⁴ "But for these two there must be one episcopate with one leader and governor. And whoever the bishop is, he will not dare to approach with two different attitudes and two different thoughts to either one of these, caring more for one than the other" (Stepanos Orbelyan, History of Syunik, translation, introduction and commentary by A. Abrahamyan, Yerevan, 1986, p. 375).

⁵ Stepanos Orbelyan also ordered huge bells for Tatev Monastery, which have survived to our days. His prominent historical piece, "The History of Sisakan State" which according to the memorial was written in Noravank ("... after collecting the necessary material the book was discoursed... in Noravank's dignified and glorious vow"), and then granted to Tatev Monastery ("We took this book ... and granted to God's house as a cherished gift to Tatev Catholic and Apostolic Church...") (Stepanos Orbelyan, History of Syunik, p. 391-392).

⁶ 13th century Armenian Manuscript Memorials, composed by A. Matevosyan, Yerevan, 1984, p 678.

⁷ 13th century Armenian Manuscript Memorials, p 677-678. Besides the main memorials, Momik scribed small references with red, calligraphic letters. In one place (sheet 147a) he wrote his name in Greek.

⁸ M. Hasratyan, Newly Discovered Monuments of Armenian Architecture and Sculpture Art in Noravank, RA SA "Lraber" soc. science, 1984, N 8, p 60, 65.

⁹ Same place, p. 679.

¹⁰ Same place.

¹¹ S. Saghunyan, Newly Discovered Lithographs from Noravank, "Hushardzan" chronicle II, Yerevan, 1993, p. 99.

¹² A. Matevosyan, S. Marabyan, Grigor Tserents Khlatetsi, Yerevan, 2000, p. 49.

¹³ 15th Century Armenian Manuscript memorials, Part A, composed by L. Khachikyan, Yerevan, 1955, p. 131-132.

¹⁴ The Hartford Seminary Foundation, The Case Memorial Library, Arm. 3

¹⁵ In the past it was thought that "vardpet" (architect) was the abbreviation of "vardapet" (archimandrite), and thus

¹² Ա. Մաթևոսյան, Ս. Մարաբյան, Գրիգոր Ծերենց Խաթաբեցի, Երևան, 2000, էջ 49:

¹³ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 131-132:

¹⁴ The Hartford Seminary Foundation, The Case Memorial Library, Arm. 3.

¹⁵ Մի ժամանակ կարծել են, որ «վարդապետը» «վարդապետի» համառոտագրությունն է և այդ մակագրությունները սխալ մեկնաբանելով Մովսիկին համարել են վարդապետ, մինչդեռ հիմնավորապես ապացուցված է, որ «վարդապետ» բառը նշանակում է ճարտարապետ:

¹⁶ Դիվան հայ վիմագրության, պր. 2, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 25:

¹⁵ Մի ժամանակ կարծել են, որ «վարդապետը» «վարդապետի» համառոտագրությունն է և այդ մակագրությունները սխալ մեկնաբանելով Մովսիկին համարել են վարդապետ, մինչդեռ հիմնավորապես ապացուցված է, որ «վարդապետ» բառը նշանակում է ճարտարապետ:

¹⁶ Դիվան հայ վիմագրության, պր. 2, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 25:

¹⁷ Ստ. Մնացականյան, Վարպետաց վարպետներ. Մանուել, Տրդատ, Մովսիկ, Երևան, 1982, էջ 152:

¹⁸ Ստեփանոս Օրբելյանի՝ Նորավանքի գավթում պահպանված տապանաքարի վրա գրված է. «Ժ թվիս ԶԾԲ (1303). այս է շիրիմ յանգրստեան մեծի մետրապոլիտին Սիւնեաց Ստեփանոսի» (Դիվան հայ վիմագրության, պր. 3, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 233):

¹⁹ Ստեփանոս Օրբելյանից հետո Սյունյաց մետրոպոլիտներն ու եպիսկոպոսները ձեռնադրության համար այլևս չէին դիմում Հայոց կաթողիկոսին, չէին մեկնում Կիլիկիա, այլ յուրաքանչյուր մետրոպոլիտ ձեռնադրում էր իր հաջորդին: Սյունյաց աթոռի այս շրջանի պատմության մասին տես Աբրահամ եպս. Մկրտչյան, Սյունյաց աթոռը և Նորավանքը Օրբելյանների օրոք, «Նորավանք 2009» ժողովածու, Երևան, 2009, էջ 4-12:

²⁰ Ուսումնասիրողների ուշադրությունը գրավել է այն, որ Քրիստոսի դիմագծերն այս քանդակում մարդաբանական մոնոլոթիդ տիպն են հիշեցնում (S. Der Nersessian, L'Art Armenien, Paris, 1977, p. 196-197): Հարկ է նշել, որ այս շրջանում մոնոլոթների գերիշխանությունն ընդունած հայ իշխանները, մասնավորապես նաև Օրբելյանները, իրենց ապահով զգալու համար յսնամիական կապեր էին հաստատում մոնոլոթական ավագանու հետ, նրանց աղջիկներին հարս քերում: Այդպիսին էր նաև Տաթմայի իշխանի կինը (Ստեփանոս Օրբելյանի մայրը): Օրբելյան իշխանների պահպանված մի քանի այլ քանդակներ



Momik was confusingly regarded as an archimandrite. However, it was later proven that “vardpet” means architect.

¹⁶ The Archives of Armenian Lithography, pr. 2, composed by S. Barkhudaryan, Yerevan, 1960, p. 25.

¹⁷ St. Mnatsakanyan, Masters of Masters: Manuel, Trdat, Momik, Yerevan, 1982, p. 152.

¹⁸ In Noravank parvis it is written on Stepanos Orbelyan's gravestone: “From the year 1303 this is the grave of peace of the Great Metropolitan of Syunik Stepanos” (The Archives of Armenian Lithography, pr. 3, composed by S. Barkhudaryan, Yerevan, 1967, p. 233).

¹⁹ After Stepanos Orbelyan Syunik region metropolitans and bishops did not turn to the Catholicos to be ordained, neither did they go to Cilicia. But rather every metropolitan ordained his successor. For more detail about the history of the See of Syunik during this period see Bishop Abraham Mkrtchyan, Noravank and the Syunik See during the Orbelyan's rule, “Noravank 2009” collection, Yerevan, 2009, p. 4-12.

²⁰ Many researchers find interesting the fact of Christ's features reminding of mongoloid anthropological type in that sculpture (S. Der Nersessian, L'Art Arménien, Paris, 1977, p. 196-197). It is worth mentioning that during this era Armenian potentates, particularly the Orbelyans, under the dominance of the Mongols built relations with Mongol notables, taking their daughters for marriage. Such was Tasrayij's wife (Stepanos Orbelyan's mother). From some other survived sculptures of Orbelyan potentates we see that they also have like features. We think that Stepanos Orbelyan also had such features because of which Momik portrayed Christ on the khachkar to his memory according to his image. It is interesting that Armenian historians, under the impression of the cruelties of the Mongols, gave very negative characteristics of their appearance. As K. Melik-Ohanjanyan notes: “... on the whole Stepanos Orbelyan is an exception”. He thinks that they have “very beautiful images...” (Kirkos Gandzaketsi, History of Armenia, op. K. Melik-Ohanjanyan, Yerevan, 1961, p. 89).

²¹ “I, Ayrpel Hovhannes... erected this cross in 1304 for the salvation of my spiritual father Ter Stepanos. Momik architect” (The Archives of Armenian Lithography, pr. 3, p. 228, S. Saghumean, Noravank Lithography, “Noravank-99” yearbook, Holy Echmiadzin-Montreal, 1999, p. 54). The khachkar was made of solid kind of fezelit stone. It was placed in Noravank parvis, but currently it is in the treasury of St. Echmiadzin.

²² Tatman khachkar was erected for the salvation of potentate Tasrayij's sole (The Archives of Armenian Lithography, pr. 3, p. 234). Khachkar was placed on the left of the entrance of Noravank parvis. Currently it is being kept in the Pontifical Residence in Echmiadzin.

րից երևում է, որ նրենք ևս այդպիսի դիմագծեր ունենին: Կարծում ենք, որ նման դիմագծերով է եղել նաև Ստեփանոս Օրբելյանը, որի պատճառով Մոմիկը նրա հիշատակին կանգնեցված խաչքարի քանդակում Քրիստոսին պատկերել է նրա նմանությամբ: Հետաքրքիր է, որ հայ պատմիչները, հիմնականում գտնվելով մոնղոլների դաժանությունների տպավորության տակ, որպես կանոն նրանց արտաքինը նկարագրելիս խիստ բացասական բնութագրումներ են տվել: Ինչպես Կ. Մելիք-Օհանջանյանն է նկատում. «...ընդհանուրի մեջ բացառություն է կազմում Ստեփանոս Օրբելյանը, որի կարծիքով նրանք են «պատկերով յոյժ գեղեցիկը...» (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 26):

²¹ «Ես Արպել Յովհաննես... կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգևոր հարսն իմ Տէր Ստեփանոսին: ԹՎ. ՉԾԳ (1304): Մոմիկ վարդապետ» (Դիվան հայ վիմագրության, պր. 3, էջ 228, Ս. Սաղումնան, Նորավանքի վիմագրերը, «Նորավանք-99» տարեգիրք, Ս. Էջմիածին-Մինյորեայ, 1999, էջ 54): Խաչքարը պատրաստված է ֆելզիտ քարի կարծր տեսակից: Նախնում դրված է եղել Նորավանքի գավթում, այժմ գտնվում է Ս. Էջմիածնի Գանձատանը:

²² Թամթան խաչքարը կանգնեցրել է Տառսայիճ իշխանի հոգու փրկության համար (Դիվան հայ վիմագրության, պր. 3, էջ 243): Խաչքարը նախկինում դրված է եղել Նորավանքի գավթի մուտքի ձախ կողմում, այժմ գտնվում է Ս. Էջմիածնի Վեհարանում:

²³ Խաչքարի ստույգ թվականն անհայտ է, բայց պատրաստվել է մինչև 1312 թ., քանի որ Թամթան մահացել է այդ թվականին: Խաչքարն այժմ գտնվում է Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում:

²⁴ Քանդակի մասին հանգամանորեն տե՛ս Ք. Ավետիսյան, Աստուածամոր քանդակները Արենիում և Նորավանքում, «Նորավանք» տարեգիրք, Մոմիկ-Երևան, 2001, էջ 110-120:

²⁵ Այստեղ Աստվածամոր երկու կողմում պատկերված են նաև Եսայի մարգարեն և Հովհաննես Մկրտիչը, իսկ բուսական զարդերին միահյուսված են առանձին բառեր, որով, փաստորեն, այս պատկերը դառնում է հայ ճարտարապետության մեջ հանդիպող «արաբեսկի» առաջին օրինակը:

²⁶ Նորավանքի գլխավոր՝ Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցին կառուցել են իշխան Լիպարիտ Օրբելյանը և Մարգրիտ արքեպիսկոպոսը 1216-1221 թթ. (օծումը տեղի է ունեցել 1223 թ.): Թե՛ «բազմաթիվ արձանագրություններում և թե՛ Ստ. Օրբելյանի մոտ վանքի այս եկեղեցին կոչվում է Ս. Ստեփանոս Նախավկա, սակայն գրականության մեջ երբեմն սխալմամբ անվանվում է Ս. Կարապետ: Իրականում Ս. Կարապետը Նորավանքի հնագույն եկեղեցին է, կոպտատաշ խո-



²³ The exact date of the khachkar is unknown, but it was created before 1312 because Tamata died in that year. The khachkar is now being kept in the geological museum of Eghegnadzor.

²⁴ About the khachkar see more detailed K. Avetisyan, "Holy Virgin's Sculptures in Areni and Noravank", "Noravank" annual, Montreal-Yerevan, 2001, p. 110-120.

²⁵ Here, on two sides of the Holy Virgin Church, Prophet Yesayi and Hovhannes Mkrtych are also depicted, and separate words are woven with floral decors with which, in fact, this figure becomes the first example of "arabeski" in Armenian architecture.

²⁶ The main church of Noravank, St. Stepanos protomartyr, was built by Prince Liparit Orbelyan and Archbishop Sargis in 1216-1221 (anointment took place in 1223). Both in various records and St. Orbelyan's mentions this church of the monastery is called Stepanos Protomartyr, but in literature it is sometimes called St. Karapet by mistake. Actually, St. Karapet is the oldest church of Noravank with rough hacked big stones. It is a one-nave construction (approximately 9-10 centuries) the ruins of which were found in 1982-1983 during the excavations to the south of St. Stepanos.

²⁷ St. Mnatsakanyan, mentioned work, p. 160-162, M. Hasratyan "The Architecture and Sculpture of Noravank's Monastery Complex", "Noravank-99" annual, Holy Echmiadzin-Montreal, 1999, p. 40.

²⁸ M. Hasratyan, "Armenian Architecture and Statuary...", p. 62.

²⁹ See M. Hasratyan for details about the sculptures, mentioned work, p. 32-41. V. Ghazaryan's opinion about sculptures of the parvis is also remarkable (see A. Aghasyan, H. Hakobyan, M. Hasratyan, V. Ghazaryan, History of Armenian Art, Yerevan, 2009, p. 114-116). In time M. Barkhudaryan ascribed the building of Spitakavor St. Astvatsatsin Monastery's Church (1321) to Momik (Archives of Armenian Lithography, pr. 3, p. 95): Recently it was discovered that inside the dome of the church it was not Jesus Christ depicted in the sculpture (as many investigators believed), but the Father holding in his hand the head of Adam with a dove above it. It is definitely an imitation of Noravank's sculptural structure (The photo of the sculpture was provided to us by Noravank's priest Sahak Martirosyan to whom we express our gratitude). It must be noted that, although Spitakavor St. Astvatsatsin Church was built by the Proshyans, in this period they were related by marriage with the Orbelyans. And the builder of the mentioned church Eachi Proshyan and Syunik's Metropolitan Hovhannes Orbeli were cousins (accordingly sons of two sisters, Tajer and Nana, see Mentions of the 13th Century Armenian Manuscript's memorials, p. 859).

շոր քարերով միանալ կառույց (մոտ IX-X դդ.), որի ավերակները բացվել են 1982-1983 թթ. պեղումների ժամանակ, Ս. Ստեփանոսի հարավային կողմում:

²⁷ Ստ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 160-162, Մ. Հասարթեան, Նորավանքի վանական համալիրի ճարտարապետությունը և պատկերաքանդակները, «Նորավանք-99» տարեգիրք, Ս. Էջմիածին-Մոսկովա, 1999, էջ 40:

²⁸ Մ. Հասարթեան, Հայ ճարտարապետության և քանդակագործության..., էջ 62:

²⁹ Քանդակների մասին հանգամանորեն տե՛ս Մ. Հասարթեան, նշվ. աշխ., էջ 32-41: Գավիթի քանդակների մասին ուշագրավ է նաև Վ. Ղազարյանի տեսակետը (տե՛ս Ա. Աղապյան, Հ. Հակոբյան, Մ. Հասարթեան, Վ. Ղազարյան, Հայ արվեստի պատմություն, Երևան, 2009, էջ 114-116): Սպիտակավոր Ս. Աստվածածին վանքի եկեղեցու գմբեթի ներսում եղած քանդակում պատկերված է Հայր Աստված, ձեռքին՝ Ադամի գլուխը, որի վրա իջնում է Սուրբ Հոգին: Քանդակի լուսանկարը մեզ է տրամադրել Նորավանքի հոգևոր հովիվ Սահակ քհ. Մարտիրոսյանը, որին շնորհակալություն ենք հայտնում: Նկատենք, որ թեև Սպիտակավոր Ս. Աստվածածին եկեղեցին կառուցել են Պողոսյանները, սակայն այս ժամանակաշրջանում նրանք խնամական կապեր ունեին Օրբելյանների հետ: Իսկ հիշյալ եկեղեցու կառուցող Էպի Պողոսյանը և Սյունյաց մետրոպոլիտ Հովհաննես Օրբելի մորաքրոջ որդիներ էին (համապատասխանաբար Թաճեր և Նանա քյուրերի որդիները, տե՛ս ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 859):

³⁰ Տարալյան Օրբելյանի թոռ և Էջիկումի որդի Բուրթելը գրականության մեջ հաճախ հիշվում է Բուրթել Մեծ անունով (հիշատակվում է 1304-1344 թթ.): 1307 թ. Մոմիկը Հովհաննես Օրբելի հանձնարարությամբ սկսել է մի ավետարանի գրություն՝ «...յաղագս փրկության հոգու և մարմնի և յարևաշատության և պահպանության մեծ և քաջագուր իշխանաց իշխանին Բիւրթելին» (A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, By Avedis K. Sanjian, Los Angeles-London, 1976, p. 85-87): Իշխանի մասին հանգամանորեն տե՛ս Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան գյուղը, Բանբեր Մատենադարանի, 9, Երևան, 1969, էջ 174-175, 188

³¹ Բուրթելաշեն եկեղեցու ճարտարապետության մասին տե՛ս Մ. Հասարթեան, նշվ. աշխ., էջ 41-46, Հ. Գասպարեան, Նորավանքի Ս. Աստվածածին եկեղեցի-դամբարանի յօրինումաձևը, ծագումնաբանությունը և վերականգնումը, «Նորավանք-99» տարեգիրք, Ս. Էջմիածին-Մոսկովա, 1999, էջ 68-75:

³² Դիվան հայ վիմագրության, պր. 3, էջ 244: Որոշ հետազոտողներ փորձել են արձանագրության միավորը Ը(8) կարդալ, որով Մոմիկի մահվան թվականը



³⁰ Burtel was the grandson of Tarsaij Orbelyan and the son of Elikum. In literature he is mentioned as Burtel the Great (refers to 1304-1344). In 1307 Momik started the Gospel's miniature by the order of Hovhannes Orbeli "For the salvation of great and brave Burtel's soul and body, the prince of princes, for his well-being and protection" (A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, By Avedis K. Sanjian, Los Angeles-London, 1976, p. 85-87). See more detailed about the Prince L. Khachikyan "Burtelyan Branch of Syunik's Orbelyans", The Banber of the Matenadaran, 9, Yerevan, 1969, p. 174-175, 188.

³¹ About the architecture of Burtelashen Church see M. Hasratyan, the same work, p. 41-46, H. Gasparyan "The Architecture of Noravank's St. Astvatsatsin Church mausoleum, Genealogy and Reconstruction, "Noravank-99" annual, Holy Echmiadzin-Montreal, 1999, p. 68-75".

³² Archives of Armenian Lithography, pr. 3, p. 244. Some examiners have tried to read the record's unit as 8, with which the date of Momik's death is becoming 1339 and solves the problem of him being the architect of Burtelashen. But the unit is 2 (see also S. Avagyan "Lapidary Seeking", Yerevan, 1986, p. 127).

³³ Considering this fact, S. Saghunyan writes: "According to tradition, the khachkar ought to be prepared and placed indeed in 1318, right after the construction of the church and not necessarily during it, 1339. In this case it can be supposed that in the place of Burtelashen's temple had been a different structure, near which a monument was placed. Afterwards, this assumed construction was destroyed and a church was built on its place, but the khachkar remained in its old place" (S. Saghunyan, Newly Found Lapidaries from Noravank, p. 103). According to the style of this khachkar Garegin Hovsepian has dedicated it to Momik (G. Hovsepian, Materials and Researches about Armenian Art History, V. 2, Yerevan, 1987, p. 222).

³⁴ A.N. Avetisyan in his book, dedicated to the miniature of Gladzor, ascribed a manuscript to Momik, which was written by the order of Keran, Princess of Cilicia (The Matenadaran, man. #6764), proceeding from which he writes: "It is difficult to say if Momik was originally from Cilicia, or he went to Cilician Armenia to improve himself" (Avetisyan, Gladzor School of Armenian Miniature, Yerevan, 1971, p. 50-51). "Cilician hypothesis" of Momik's origin is met in other publications too. But a lot of facts show that they aren't serious basis for this view (K. Matevosyan, The Gospel of Princess Keran and Prince Hetum, "Science and technology", 1991, #5, p. 46-50, A. Gevorgyan, Armenian Miniaturists: Bibliography, IX-XIX centuries, Gahire, 1998, p. 446) and the gravestones of Momik's parents and some of other

դառնում է 1339 և լուծվում է նրա՝ Բուրթելաշենի ճարտարապետ լինելու հարցը: Սակայն միավորը Բ(2) է (այս մասին տե՛ս նաև **Ս. Ավագյան**, Վիճազրական պրպտումներ, Երևան, 1986, էջ 127):

³³ Այս փաստը վկայակոչելով Ս. Սաղումյանը գրում է. «Համաձայն սովորույթի, խաչքարը, անշուշտ, պատրաստված-տեղադրված պետք է լինի 1318 թ. անմիջապես հետո և ոչ անպայման եկեղեցին կառուցելու ընթացքում (1339 թ.): Այս պարագայում ենթադրելի է, որ Բուրթելաշեն տաճարի տեղում եղել է մի այլ շինություն, որին առընթեր կանգնեցվել է կոթողը: Այնուհետև այդ ենթադրելի շինությունը քանդվել է ու տեղը բարձրացել այդ հրաշակերտը, իսկ խաչքարը մնացել է իր նախկին տեղում» (**Ս. Սաղումյան**, Նորահայտ վիճագրեր Նորավանքից, էջ 103): Այս խաչքարի ոճից ելնելով այն Մոմիկին է վրագրել Գարեգին Հովսեփյանը (**Գ. Հովսեփյան**, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երևան, 1987, էջ 222):

³⁴ Ա. Ն. Ավետիսյանը Գլաճորի մանրանկարչությանը նվիրված գրքում Մոմիկին է վերագրել 1283 թ. Կիլիկիայում Կեռան թագուհու պատվերով գրված մի ձեռագիր (Մատենադարան, ձեռ. թիվ 6764), որից ելնելով գրում է. «Դժվար է ասել՝ Մոմիկը Կիլիկեցի է եղել, թե գնացել է Կիլիկյան Հայաստան կատարելագործվելու» (**Ա. Ավետիսյան**, Հայկական մանրանկարչության Գլաճորի դպրոցը, Երևան, 1971, էջ 50-51): Մոմիկի ծագման «Կիլիկյան վարկածը» տեղ է գտել նաև այլ հրատարակություններում: Սակայն բազմաթիվ փաստեր ցույց են տալիս, որ նման վերագրման համար հիմքեր չկան (**Կ. Մաթևոսյան**, Կեռան թագուհու և Հեթում արքայորդու Ավետարանը, «Գիտություն և տեխնիկա», 1991, N 5, էջ 46-50, **Ա. Գևորգեան**, Հայ մանրանկարիչներ. Մատենագիտություն, IX-XIX դդ., Գահիրե, 1998, էջ 446), իսկ վերջին տարիներին հնագետներ Ա. Քալանթարյանի, Գ. Սարգսյանի և Հ. Մելքոնյանի կողմից Մոմիկի ծնողների և ընտանիքի այլ անդամների տապանաքարերի հայտնաբերման շնորհիվ ոչ մի կասկած չի մնում, որ նա ծնունդով Վայոց ձոր գավառից էր:

³⁵ **Ս. Բաթխուդարյան**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 85-86:

³⁶ Հնավայրի ուսումնասիրության մասին ու արձանագրությունների ամբողջական տեքստերը տե՛ս **Ա. Քալանթարյան**, **Գ. Սարգսյան**, **Հ. Մելքոնյան**, Մոմիկյան Նորահայտ հիշատակներ, «Հայ արվեստ», 2005, թիվ 3, էջ 28-30:

³⁷ Ա. Քալանթարյան, Գ. Սարգսյան, Հ. Մելքոնյան, նշվ. աշխ., էջ 30: Այստեղ հեղինակները Մոմիկի մահվան թվական են համարել 1339-ը:

³⁸ **Ս. Բաթխուդարյան**, Միջնադարյան հայ ճարտար-



members of his family, which have been found lately by archeologists A. Qalantaryan, G. Sargsyan and H. Melkonyan, don't leave a doubt that he was originally from Vayots Dzor region.

³⁵ **S. Barkhudaryan**, Armenian Medieval Architects and Stone Carver Masters, Yerevan, 1963, p. 85-86.

³⁶ About the research of the excavation place and the complete texts of records see **A. Qalantaryan, G. Sargsyan, H. Melkonyan**, Momikyan Newly Found memorials, "Armenian Art", 2005, #3, p. 28-30.

³⁷ **A. Qalantaryan, G. Sargsyan, H. Melkonyan**, the same work, p. 30. Here the examiners consider 1339 as the year of Momik's death.

³⁸ **S. Barkhudaryan**, Armenian Medieval Architects and Stone Carver Masters, p. 62-75.

³⁹ In the past a khachkar was placed in front of the parvis south to the entrance. In the central part of khachkar's top on a "choreqkerpyan" chair is carved Holy Virgin's and Jesus's sculpture, like the ones in Areni and Noravank, below which is written: "Holy Virgin, intercessor of Jesus Christ". Especially unique is the Holy Virgin's portrait on a "choreqkerpyan" chair. The ornament of dates starting from below the cross, ends up with crossing hands, which rise from two parts of the main cross. Right near the base of the cross, on two sides of the ornaments of roses, Grigor and Hasanpugha brothers are carved, with praying hands, for whose wellbeing the khachkar is ordered. In the second circle of the main rose Adam and Eva are presented in the paradise which is a unique sculpture for pictography.

⁴⁰ **A. Ghanalanyan**, Avandapatum, Yerevan, 1969, p. 228.

⁴¹ Memorials of Armenian 13th Century Manuscripts, p. 679.

⁴² Memorials of Armenian 14th Century Manuscripts, composed by **L. Khachikyan**, Yerevan, 1950, p. 9.

⁴³ The memorial has other interesting historic information except these parts. See A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, p. 85-87.

⁴⁴ Momik is a unique nickname. Such a name is not mentioned in H. Acharian's "Dictionary of Armenian Personal Names", in other bibliographical dictionaries and encyclopedias. We see the limited use of that name in the second part of the 20th century among clergymen and laic who were named after the master of masters Momik.

րապետներ և քարգործ վարպետներ, էջ 62-75:

³⁹ Նախկինում խաչքարը դրված է եղել գավիթի դիմաց, մուտքից հարավ: Խաչքարի վերնամասի կենտրոնում չորեքկերպյան աթոռին՝ Աստվածամոր և Հիսուսի քանդակն է, Արենիի և Նորավանքի համանման պատկերների նմանությամբ, որի տակ գրված է. «Ս(ուր)բ Ա(ստուա)ծածին բարեխօս լեր առ Յ(իսու)ս միածին»: Պատկերագրական տեսակետից եզակի երևույթ է Աստվածամոր պատկերումը չորեքկերպյան աթոռին բազմած: Խաչատակի արմավագարդն ավարտվում է բուն խաչի երկու կողմերից բարձրացող խաչակիր ձեռքերով: Անմիջապես խաչի հիմքի մոտ՝ վարդյակի երկու կողմերում ձեռքերի աղոթական դիրքով քանդակված են Գրիգոր և Հասանպուղա եղբայրները, որոնց արևշակության համար է պատվիրված խաչքարը: Իսկ բուն վարդյակի երկրորդ շրջագծի մեջ պատկերված են Ադամն ու Եան դրախտում, որը բացատիկ է պատկերագրական առումով:

⁴⁰ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 228:


⁴² ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 9:

⁴³ Նշված հատվածներից բացի հիշատակարանն ուշագրավ պատմական տեղեկություններ է պարունակում: Տե՛ս A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, p. 85-87.

⁴⁴ Մոմիկը եզակի անձնանուն է: Այսպիսի անունով մեկ այլ մարդ չի նշվում Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում», այլ կենսագրական բառարաններում ու հանրագիտարաններում: Այդ անվան սակավ կիրառությանը հանդիպում ենք միայն 20-րդ դարի երկրորդ կեսին, հոգևորականների և աշխարհականների մոտ, որոնք անվանակոչվել են ի պատիվ վարպետաց վարպետ Մոմիկի:

Պարոն Սարգսի տապանաքարը (մոմիկյան դպրոց), 1331

Mr. Sargis's gravestone (Momik's school), 1331





Ս. Աստվածածին
եկեղեցի,
Հուկաս և Մարկոս
Ավետարանիչների
խորհրդապատկերնով
քարձրաքանդակները

St. Astvatsatsin Church
The Bas-reliefs with the
symbols of Luke and Mark
the Evangelists



Ս. Աստվածածին
եկեղեցի,
Հովհաննես
Ավետարանչի
խորհրդապատկերով
բարձրաքանդակը

St. Astvatsatsin Church
The Bas-reliefs with the
symbol of John
the Evangelist

Նորավանքի
վերաբացումը, 1999

The reopening
of Noravank, 1999



Մաթևոսյան Կ.
ՄՈՍԻԿ
Matevosyan K.
MOMIK

լուսանկարները
Զավեն Սարգսյանի,
Հրայր Բազե Խաչերյանի,
Կարեն Մաթևոսյանի
և Տ. Սահակ քահանա Մարտիրոսյանի

փառաբանականներ
© Էդիկ Ղաբուզյան, GHEA Mariam
© Մկրտիչ Մաթևոսյան, MMelf

photographs
Zaven Sargsyan,
Hrair Baze Khacherian,
Karen Matevosyan
and Father Sahak Martirosyan

fonts
© Edik Ghabuzyan, GHEA Mariam
© Mkrtich.Matevosian, MMelf



Տպագրությունը
Լեզալ Պլյուս, Երևան, 2010
Ծավալը՝ 5,5 տպ. մամ., տպաքանակը՝ 1000,
գինը՝ պայմանագրային

Printing
Legal Plus, Yerevan, 2010

Karen Matevosyan



monik

Yerevan 2010